Azg Ազգ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 231 (4849)

ISSN: 1829-1651

Ցեղասպանության ուրացումը իրականացնող օրինագիծը կքվեարկվի վաղը

Ֆրանսիայի Ազգային ժողովում դրա քվեարկված լինելու մասին լուրերը՝ թուրքական ապատեղեկատվություն

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Երեկ հայասանյան էլեկտրոնային եւ տպագիր մամուլի որոշ օրգաններ տեղեկացրել էին, որ դեկտեմբերի 19-ին Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատը՝ Ազգային ժողովը, քվեարկության է դրել Հայոց ցեղասպանության ուրացումը իրականացնող օրինագիծը եւ ձայների 106 կողմ, 19 դեմ հարաբերակցությամբ ընդունել է: Այս կարգի տեղեկություն հրապարակել էին նաեւ թուրքական կայքէջերն ու թերթերը, մասնավորապես՝ «Ենի Շաֆաֆն» ու «Վաթանը»:



Հակառակ դրանց, «Սթար» թերթը գրել էր, որ հինգշաբթի օրը, ի նշան բողոքի, Ֆրանսիայում գործող թուրքական միությունները պատրաստվում են ցույց կազմակերպել Ֆրանսիայի Ազգային ժողովի առջեւ: Թուրքական հանրային հեռուստատեսությունը ոչ միայն չէր հաստատել ֆրանսիական օրինագծի՝ Ազգային ժողովում քվեարկության լուրը, դեռ ավելին՝ մեջբերել էր օրինագիծը հակակշռելու Թուրքիայի ձեռնարկումների մասին Եվրոմիության գծով նախարար, գլխավոր բանակցող էգեմեն Բաղըշի խոսքերը. «Թուրքիան ունի օրինագիծը հակակշռող Ա, Բ եւ Գ ծրագրեր:

Տես էջ 2

«Երրորդ երկրները» եւ ՀԱՊԿ-ը

Մոսկվայում գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ մանակցել է ՀԱՊԿ երկրների ղեկավարների գագաթաժողովին, որի շրջանակներում մի շարք հարցեր քննարկվելուց բացի հայտարարություն է ընդունվել ԱՊՀ-ի կազմավորման 20 եւ ՀԱՊԿ կազմավորման՝ 10-ամյակի կապակցությամբ:

ՀԱՊԿ գագաթաժողովին մասնակցել են կազմակերպության անդամ բոլոր՝ 7 երկրների ղեկավարները. նախագահ Սարգսյանից բացի՝ Դմիտրի Մեդվեդեւը, Ալեքսանդր Լուկաշենկոն, Նուրսուլթան Նազարբաեւը, Ուզբեկստանի ղեկավար Իսլամ Քարիմովը, Տաջիկստանի ղեկավար Էմոմալի Ռահիմոնը, եւ Ղրղզստանի նորընտիր նախագահ Ալմազբեկ Աթամբաեւը: Գագաթաժողովի աշխատանքներից հետո՝ ՀԱՊԿ-ում նախագահությունը Բելառուսից հետո ստանձնած Ղազախստանի ղեկավար Նուրսուլթան Նազարբաեւը հայտարարել է, որ կազմակերպության անդամ բոլոր երկրների հավանությամբ այսուհետեւ «ՀԱՊԿ անդամ երկրի տարածքում երրորդ երկրի (ՀԱՊԿ-ի կամ չմտնող) զինված ուժեր տեղակայելու դեպքում պարտադիր անհրաժեշտ կլինի ստանալ ՀԱՊԿ անդամ մյուս երկրների պաշտոնական համաձայնությունը»: Ասենք, եթե Գվատեմալան ցանկանում է Բելառուսում ռազմական բազա ունենալ, ապա Հայաստանն այդ թվում պետք է իր պաշտոնական համաձայնությունը տա Մինսկին: Հասկանալի է, որ ՀԱՊԿ երկրների ղեկավարները նման որոշում կայացրել են, ոչ «գվատեմալական ռազմաբազաների դեմ»: Առաջին հերթին այս որոշումն ուղղված է Ղրղզստանին, որի տարածքում գտնվող ՀԱՊԿ անդամ երկրներից այդ երկրի մայրաքաղաքի «Մանաս» օդանավակայանում շարունակում է տեղակայված մնալ ամերիկյան ռազմաբազան՝ Աֆղանստանում ամերիկյան ռազմական գործողությունների նպատակով: Չնայած ամերիկյան վարչակազմը բազմիցս հայտարարել է, որ Աֆղանստանում ամերիկյան զինուժի առաքելությունը ավարտվում է, հետեւաբար՝ «Մանաս» ռազմական բազան գոնե այս առումով այլեւս անհրաժեշտ չէ ամերիկացիներին, Ղրղզստանի նախագահ Աթամբաեւը, ընտրվելուց օրեր անց շտապեց հայտարարել, որ «Մանասից» ամերիկացիները պետք է դուրս գան, քանի որ «Ղրղզստանը չի ցանկանում լինել այն երկրների ցանկում, որոնց վրա կարող է ուղղվել ԱՄՆ-ի թշնամիների հարվածը»:

Այս ամենով հանդերձ՝ ՀԱՊԿ անդամ երկրների հիշյալ որոշումը խիստ ուշագրավ է. այն նշանակում է, որ առանց, «օրինակ՝ Բիշքեքի» համաձայնության ոչ մի այլ երկրի զինված ուժերի ներկայացուցիչ չի կարող կանգնել, օրինակ, հայ-ադրբեջանական սահմանում:

Իսկ ՀԱՊԿ երկրների նախագահների գագաթաժողովում այս որոշման ընդունումից բացի քննարկվել են նաեւ շուրջ երեք տասնյակ հարցեր՝ հավաքական անվտանգության համակարգի կատարելագործման, կազմակերպության ներուժի մեծացման, ռազմական ու ռազմատնտեսական համագործակցության օպտիմալացման, ճգնաժամային իրավիճակներին արձագանքման, տեղեկատվական անվտանգության, թմրանյութերի ապօրինի շրջանառության ու ահաբեկչության դեմ պայքարի խնդիրներով:

Հ. ԱՓՅԱՆ

Ո՞ւմ կընտրեիք, եթե ընտրությունները լինեին այս շաբաթ

Հասարակական քաղաքական հետազոտությունների կենտրոնը մինչ խորհրդարանական ընտրությունները նախաձեռնել է հետազոտել հասարակության կարծիքը: Հասարակական կարծիքի հետազոտությունը կանցկացվի չորս փուլով: Մինչեւ փետրվար յուրաքանչյուր ամիս կանցկացվեն հետազոտություններ, այնուհետեւ արդյունքները կամփոփվեն:

Ըստ նոյեմբեր ամսվա հետազոտության արդյունքների՝ հարցվածների մեծ մասը Հայաստանի համար առաջնային խնդիր է համարում սոցիալական արդարությունը, գործազրկությունը, գնաճը, արտագաղթը, Արցախի հիմնախնդիրն ու Ցեղասպանության միջազգային ճանաչումը:

«Եթե ընտրությունները լինեին այս շաբաթ, ո՞ր կուսակցությանը ձայն կտաք» հարցին հարցվածների 24 տոկոսը պատասխանել է՝ ՀՀԿ, 21.5 տոկոսը՝ ԲՀԿ, 17 տոկոսը՝ ՕԵԿ, 13.5 տոկոսը՝ ՀԱԿ, 9.5 տոկոսը՝ ՀՅԴ, 6.5 տոկոսը՝ «Ժառանգություն»:

Հարցմանը մասնակցել է 630 հոգի: Մասնակիցների 54 տոկոսը կանայք են: Նրանց 24 տոկոսը հիմնականում աշխատանք չունի, 11 տոկոսը պետական աշխատողներ կամ քաղաքացիներ են: Հարցման մասնակիցների 64 տոկոսը բարձրագույն կրթություն ունի:

Հ. Հ.

Եվրոհանձնաժողովը լիազորվել է սկսելու անցագրային ռեժիմի պարզեցման բանակցությունները Հայաստանի հետ

Եվրոպական միության խորհուրդը իր դեկտեմբերի 19-ի նիստում որոշում է կայացրել Եվրոհանձնաժողովին լիազորել սկսելու Հայաստանի հետ անցագրային ռեժիմի պարզեցման առնչությամբ համաձայնագրերի բանակցությունները: Նույն որոշմամբ ներառված է նաեւ բանակցությունների մեկնարկի հայտարարումը Ադրբեջանի հետ:

Ինչպես տեղեկացնում է Եվրոպական խորհրդի պաշտոնական կայքէջը, երբ Եվրոհանձնաժողովը համարի, որ բանակցությունները Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ավարտված են, իսկ կլինի, որ Եվրոպական խորհուրդը որոշումներ կայացնի համաձայնագրերը ստորագրելու եւ ավարտելու առնչությամբ՝ որակական մեծամասնությամբ, որից հետո էլ անհրաժեշտ է, որ Եվրոխորհրդարանը տա իր համաձայնությունը:

Ա. Հ.

Սյունիքի մարզպետ. «Սուս մնա, քանի հետդ վատ բան չի պատահել»

Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը կրկին հայտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում: Այս անգամ նա սպառնացել է Քաջարան գյուղ այցելած բնապահպաններին՝ նրանց խորհուրդ տալով սուս մնալ, այլապես հետները վատ բան կպատահի:

«**Ազգ**» օրաթերթն առաջիններից էր, որ անդրադարձավ Քաջարանի գյուղի խնդրին: Հիշեցնենք, որ կառավարության որոշմամբ գյուղի մի հատված՝ 180 հա ճանաչվել է գերակա բացառիկ շահ եւ տրամադրվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին հանքարդյունաբերության նպատակով: Տարածքն ընդգրկում է նաեւ գյուղի գերեզմանոցը: Գարնանից քաջարանցիները պայքարում են, որ իրենց հողամասերը պոչամբարներ չդառնան, սակայն՝ անօգուտ: Քաջարանցիները բազմաթիվ նամակներ՝ հասցեագրված ՀՀ նախագահին, վարչապետին եւ ԱԺ նախագահին, մնում են անպատասխան:

Հ. Հ.

Բրայզայի թեկնածության շատագովը

Ինչու է Washington Post-ի խմբագրական էջի խմբագիրն այդքան ջանացել աջակցել «քարշակարգ» դիվանագետին

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզայի՝ այդ երկրում նույն կարգավիճակով մնալու հարցը կրկին կախվել է օդում, քանի որ ԱՄՆ Սենատը գրեթե մեկ տարի անց էլ չի հաստատել նրա թեկնածությունը, որ առաջ տարավ Բարաք Օբաման՝ օգտվելով Սենատի արձակուրդային իրավիճակից: Ամեն դեպքում, մոտ ժամանակներս Բրայզայի թեկնածության հարցը կրկին կբարձրացվի Սենատում: Իսկ թե ինչ իրավիճակ է իր թեկնածության շուրջը Սենատում՝ դրանից իբր անտեղյակ է ներկայանում նաեւ ինքը՝ Բրայզան, թեեւ հստակ է, որ թեկնածությունը չհաստատվելու դեպքում ինքն ուղղակի պարտադրված կլինի հավաքել իրեն ու վերադառնալ Միացյալ Նահանգներ:

Բավական մի քանի այլ մեկնաբանություններ հնչեցնելու ժամանակ Բրայզան նաեւ անդրադարձել է իր թեկնածության առնչությամբ Վաշինգտոնում տիրող իրավիճակի մասին Washington Post-ի խմբագիր Ֆրեդ Հայթի հրապարակմանը, որում վերջինս քննադատում է ԱՄՆ Սենատի որոշ՝ հայանպաստ դիրքորոշում ունեցող ներկայացուցիչների դիրքորոշումը Բրայզայի թեկնածության առնչությամբ: Ադրբեջանում ԱՄՆ դեսպանը բավարարվել է նշելով, թե ԱՄՆ-ում յուրաքանչյուր կառավարական կառույց ունի իր լիազորությունների շրջանակը:

Այդուհանդերձ, այդ նույն լիազորությունների տարբեր լինելու հարցում բացարձակապես կողմնակալ է մոտեցել ամերիկյան պարբերականի խմբագիրը, ըստ որի իբր որոշ ամերիկացի կոնգրեսականներ մոռացել են Նահանգների ազգային շահերը՝ դրա փոխարեն հետամուս լինելով այլ շահերի: Ողջ խնդիրն էլ այդ կոնգրեսականների հայանպաստ մոտեցում դրսեւորելն է:

Վաշինգտոնյան պարբերականի խմբագրական էջի խմբագրին հստակապես հակ է հիշեցնել, որ մի այնպիսի երկրում, ինչպիսին Ադրբեջանն է, ամերիկյան ազգային շահերից ոչինչ չի պաշտպանվում ու ներկայացվում, բացի տնտեսականից ու մի փոքր էլ քաղաքականից: Ամերիկյան ներկայացվող մնացյալ բոլոր շահերը ստորադրյալ են տնտեսականից ու քաղաքականից՝ առնվազն տարածաշրջանում ռուսաստանյան ազդեցությունը հավասարակշռելու առումով:

Իսկ, որ ամերիկացի խմբագրի համար որպես սեփական շահ է ներկայացվում կոնգրեսականների հայանպաստ մոտեցումը, ուղղակի զավեշտալի է, քանի որ այդ կոնգրեսականները ներկայացնում են նույն Միացյալ Նահանգների քաղաքացիների՝ թեկուզ ծագումով հայերի, շահերը, ասել է թե Ֆրեդ Հայթն ուզում է, իր ընկալմամբ, ազգային շահ տեսնել սեփական քաղաքացիների դիրքորոշումը ներկայացնելը, այլ միայն կուրորեն հետեւել տնտեսական օգուտից բխող «շահերին»:

Իսկ որ Վաշինգտոնից հարավկովկասյան երկու երկրների՝ Հայաստանի ու Ադրբեջանի մասին դատողություններ անող Հայթը ուղղակի անտեղյակ է նույն այդ տարածաշրջանից կամ, ինչպես ասում են, ազգային շահը շփոթել է փողի ու ազդեցության լծակներ ունենալու ցանկության հետ, ապացույցների կարիք չունի:

Տես էջ 2

ԱԶԳ

Ընթացիկ

Հայկական հարցը՝ բարոյականության փորձաքար...

Վաղը՝ դեկտեմբերի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը կքննարկի Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Այդ առնչությամբ թուրքական բարձր ղեկավարությունն արդեն սկսել է ծանր հոգեբանական ճնշումը ֆրանսիական գործընկերների նկատմամբ՝ օրենքի նախագծի ընդունման դեպքում երկկողմ հարաբերությունների ծայրահեղ վատթարացման բազմաթիվ սպառնալիքներ հնչեցնելով: Թվում է, թե այս անգամ օրինագիծը վերջապես կստանա օրենքի ուժ (այն արդեն 2006-ին ընդունվել էր Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատում, սակայն մերժվել Սենատում), քանի որ առաջին անգամ Սենատում մեծամասնություն են կազմում նախագծի ընդունման համար արդեն մի քանի տարի պայքարող սոցիալիստները, դեռ ավելին՝ Սենատի իշխանական թեւը սոցիալիստներից առաջ ընկնելով՝ փորձելու է կատարել նախագահ Սարկոզիի՝ Երեւանում հնչեցրած խոստումը: Նման պայմաններում միակ տրամաբանական հեռեւանքը միաձայն որոշումն է: Բայց արդյոք ամեն ինչ հենց այդպես տրամաբանական էլ կլինի՞...

Ոչ հեռու անցյալում ամերիկյան դեմոկրատները նույնպես ջանք չէին խնայում ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծն ընդունելու համար եւ միշտ հանրապետական իշխանությունը, այդ թվում՝ ԱՄՆ հանրապետական նախագահի աշխատակազմը, կասեցնում էր գործընթացը: Այնուհետեւ՝ Օբամայի ընտրվելուն պես, երբ նույնանման իրադրություն էր ԱՄՆ-ում, թվում էր, թե օրինագծի ընդունումը լինելու է ուժերի դասավորվածության եւ նախագահի խոստման տրամաբանական հետեւանքը, բայց գործընթացը նորից կասեցվեց, այս անգամ դեմոկրատ նախագահի աշխատակազմի օգնությամբ:

Բնականաբար մենք դժգոհ ենք, բայց մենք ցավ ենք ապրում ոչ թե մեր, այլ այդ պետությունների ժողովուրդների համար, որոնց ներկայացուցիչներն այդքան բարոյական չգտնվեցին մեկ այլ ժողովրդի արդարացի պահանջը բավարարելու ու նրա հետ կատարվածին ճիշտ որակում տալու: Ընդհանրապես, հայերս ունենք աշխարհաքաղաքական հեռաքրքրական ընկալումներ, որոնք որեւէ կերպ չեն առնչվում «իրական քաղաքականությանը» (realpolitik): Այո, մենք ունենք շատ միանշանակ ու մաքուր պատկերացում, որ բարին պետք է հաղթի: Բարին էլ իհարկե մենք ենք, եւ բոլոր նրանք, ովքեր կիսում են մեր պահանջների իրավացիությունն ու մեր հանդեպ պատմական արդարության վերականգնումը: Ընդ որում՝ «մենք» ու «նրանք» ասելով հասկանում ենք ոչ թե անհատները կամ ժողովուրդները, այլ պետությունները. հենց այդ պետական կազմավորումներն էլ ըստ մեզ պետք է ձգտեն լինել բարոյական եւ արժանապատիվ, այսինքն՝ լինեն մեր կողմից: Հետեւապես մենք չենք էլ փորձում հաշտվել այն մտքի հետ, որ վերոնշյալ հասկանիշները վերաբերում են անձի կամ անձանց խմբավորման հոգեւոր կերպարին միայն եւ ոչ թե ինստիտուտներին:

Հիմա հասկանանք, թե ինչ են ստանում պետությունները՝ լինելով բարոյական եւ արժանապատիվ: Արդյոք դրա դիմաց պետությունը կարո՞ղ է ստանալ որեւէ նյութական տեսանելի շահ: Օրինակ՝ նույն Ֆրանսիան կամ ԱՄՆ-ը ինչ կստանան եւ ինչ կկորցնեն համապատասխանաբար Ցեղասպանության ժխտումը քրեականացնելու եւ ճանաչելու դեպքում: Կորուստը կարող է լինել նյութական, իսկ ձեռքբերումը՝ հոգեւոր բարոյական: Ուրեմն բարոյական լինելը ձեռնտու է միայն, երբ շահավետ է նաեւ նյութական տեսանկյունից: Թե ինչ շահ է հետապնդում Ֆրանսիան, գիտի թերեւս միայն նա, քանի որ մենք տնտեսական առումով չենք կարող փոխարինել Թուրքիային: Երեւի թե միակ կարեւոր դիվիդենտը հենց պետության բարոյական իմիջն է, որը մի քանի ծեր ազգերի խորունկ աչքերում երախտագիտության տեսքով կարող է տեսնել Ֆրանսիան եւ նրա ժողովուրդը:

Ստացվում է, որ մենք, հավատալով քաղաքական բարոյականությանը, մեր հարաբերություններն այլ ժողովուրդների հետ կառուցում ենք հենց այդ գլխավոր չափորոշիչով: Ինչպես մարդկային հարաբերություններում. ունենք մեծ շրջապատ, քանի որ բարեւ Աստծունն է, բայց «մոտիկ ընկեր» տիտղոսը շնորհում ենք միայն նրանց, ովքեր կկիսեն մեր դարդերը եւ մեր աշխարհայացքը: Այդպիսի մոտիկ ընկերների թվին են ավանդաբար դասվում Ուրուգվայը, Արգենտինան, Կիպրոսը, հիմա էլ Ֆրանսիան:

Մյուս կողմից էլ, եթե դա իրոք ազդում է դիմացինի վրա եւ մեր գործընկեր պետությունները մեր դարդերը կիսելով եւ չհետաքրքրելով որեւէ տեսանելի այլորպական շահ, իրենց ազգային ինքնությունն ու արժանապատվությունն իրենց եւ մնացյալ աշխարհի աչքում բարձրացնելու առումով հավելյալ ոգեղեն դիվիդենտներ են ստանում, ուրեմն արդարացված է մեր դերը պատմության եւ աշխարհի քաղաքականության մեջ՝ լինելու ազգերի բարոյականության կամ գոնե դրա իմիջի չափիչ գործոն: Այսօր, երբ տնտեսական, ռազմական եւ այլ խնդիրների ակտիվ ՁԼՄ-ացման հետեւանքով առաջանում է ոչ միայն լոկալ, այլեւ արդեն միջազգային հասարակական կարծիք, պետությունների փոխհարաբերությունների եւ միջազգային քաղաքականության մեջ բարոյականությունը սկսում է դառնալ գործոն: Այս քարոզչական պայքարի արդյունքում էլ «բարոյական» պետությունները, անկախ իրենց տնտեսական կամ ռազմական հզորությունից, դառնալու են սահմաններ չճանաչող կոսմոպոլիտ հասարակության առաջնորդները եւ ստանալու են յուրօրինակ «քարս-բլանշ» որոշ հարցեր լուծելու ընթացքում:

Ամեն նորը լավ մոռացված հինն է, մենք էլ, լինելով հին, չենք հաշտվելու այսօրվա նորի հետ, այնքան ժամանակ, մինչեւ այն չփոխարինվի բոլորից մոռացված, բայց մեր կողմից սրբորեն պահպանված հնով...

Ուրեմն մնում է սպասել մեկ օր՝ հասկանալու համար, արդյոք Ֆրանսիան մեր հետ հարաբերություններում ընդունո՞ւմ է «բարոյական պետություն» գաղափարը, թե՞ նա էլ ուղղակի մեր շրջապատի տղերքից է, ում ուղղակի մյուսներից մի քիչ ավելի ջերմ ենք բարեւում...

ՏԻԳՐԱՆ ԱԲՏԱՇԵՍՅԱՆ

Ցեղասպանության ուրացումը քրեականացնող օրինագիծը կքվեարկվի դեկտեմբերի 22-ին

1-ին էջից

Մենք տեր ենք կանգնելու մեր ազգային դատին: Սա որքան Թուրքիայի, այնքան էլ Ֆրանսիայի խնդիրն է: Ֆրանսիան չի հասկացել Թուրքիայի միջազգային դերը, սակայն նախ պետք է սպասենք մինչեւ հինգշաբթի: Այս անմիտ օրինագծի հանդեպ հանդիսատեսի կեցվածքն չենք ընդունի»:

Թուրքական հանրայինի այս վերաբերմունքը սարսափելի էր թվում, սակայն տարածվեց ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանի** հաղորդագրությունը: Այս հաղորդագրության մեջ պարոն Մանոյանը Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի հասատումը համարում էր թուրքական որոշ լրատվամիջոցների սխալ տեղեկություններից բխող կեղծիք: Կիրո Մանոյանի հաղորդագրությունը հասատեց նաեւ Les Nouvelles d'Armenie հանդեսը:

Թուրքական լրատվամիջոցներ ասելով, ըստ երեւույթին պետք է հասկանալ թուրք գործարարների «Բորսա-ֆինանս» կայքէջին, որը դեռեւս դեկտեմբերի 19-ին տեղական ժամանակով 12:05-ին տարածել էր «Այսպես կոչված Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող օրինագծի Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատ՝ Ազգային ժողովում 106 կողմ եւ 19 դեմ ձայնով ընդունման» լուրը: Այս կայքէջը միաժամանակ ընդգծել է. «Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած օրինագիծը ներկայացվելու է վերին պալատի Սենատի հաստատմանը: Սակայն Ֆրանսիայի կառավարությունը կորոշի, թե Ազգային ժողովում այսօր ընդունված օրինագիծը երբ ներկայացվի Սենատ»:

Այս կայքէջին նույն օրը հաստատել էր Նյու 3որքի turkishny.com-ը, մատնանշելով. «Ենթադրվում է, որ խնդրո առարկա օրինագիծը դեկտեմբերի 22-ին՝ հինգշաբթի օրը, քվեարկության դրվի: Սակայն քվեարկության դնելու վերջնական որոշումը պատկանում է կառավարությանը, որն էլ դեկտեմբերի 20-ի առավոտյան կվճռի այս հարցը»:

Ի՞նչ նպատակ է հետապնդում թուրք գործարարների կայքէջի դեռեւս դեկտեմբերի 19-ին տարածած այս ապատեղեկատվությունը, չգիտենք: Բայց որ անպարկեշտության ակնհայտ դրսեւորում է, կասկած չի հարուցում: Գուցե եւ լինի չարամիտ վրեժխնդրություն, որովհետեւ, թուրքական NTV-ի վկայությամբ, Ֆրանսիայի գործարար շրջանակներում լոբբիստական գործունեություն ծավալելու համար Փարիզ մեկնած Թուրքիայի արդյունաբերողների եւ գործարարների միության ու Թուրքիայի պալատների ու բորսաների միության պատվիրակությունները տեղ հասնելուն պես ստիպված են եղել փոխելու հյուրանոցը:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ Grand Hotel-ը հրաժարվել է պատվիրակությանը տրամադրել երեկույթի համար դեռեւս 3 օր առաջ պատվիրված սրահը՝ չեղյալ հայտարարելով բրոնիան, որի գումարը նախապես ստացել էր: Ի դեպ, այս հյուրանոցում էին իջեւանելու նաեւ թուրք լրագրողները: Դրանից հետո թուրք գործարարներն ու լրագրողները տեղափոխվել են Hilton հյուրանոց: Թուրքական NTV-ն եւ մամուլը, անդրադառնալով այս միջադեպին, դա որակել են իբրեւ անարգանք Թուրքիայի պատվիրակություններին:

ՊԱՇՏՊԱՐԳԻԿ

Բուլղարիայում բացվեց հայկական եկեղեցի

Արտաքին գործերի նախարարությունից տեղեկացանք, որ դեկտեմբերի 19-ին Բուլղարիայի Պազարջիկ քաղաքում կատարվել է Հայ առաքելական Սուրբ Ստեփանոս եկեղեցու բացումը: Բուլղարիայի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդական տեղապահ տեր Աբգար Հովակիմյանը մատուցել է պատարագ, որին ներկա են եղել Բուլղարիայում Հայաստանի դեսպանը, Պազարջիկի քաղաքապետը, հայ բարերներ եւ այլք:

Եկեղեցու հիմքը դրվել է 2005-ից, իսկ կառուցման աշխատանքները տեւել են շուրջ 7 տարի: Ի. Պ.

Խոսք ընկերոջ մասին

Կան մարդիկ, որոնք ապրած կյանքով, հույզերով ու երազանքով, գիտելիքների առաջ պաբարով ձեւավորում են ամբողջական նկարագիր, որպես վառ անհատականություն մնալով մարդկանց հիշողության մեջ:

Այդպիսին էր մեր ընկերը՝ Հայաստանի դեմոկրատական կուսակցության հիմնադիր եւ նրա նախագահության անփոփոխ անդամ Գրիգոր Պողոսի Գույումջյանը:

Բոլոր նրան ճանաչողների համար նա հայ գրականության նվիրյալ էր, Սփյուռքի անզուգական գիտակ, հանրագիտարանային գիտելիքների տեր, ուսանողական լսարանում սիրված դասախոս, բազմաթիվ գիտական հրապարակումների հեղինակ, սոցիալիստական գաղափարախոսության անհերթ քարոզիչ:

Գրիգոր Գույումջյանի հարազատների ու մերձավորների հետ մեկտեղ սգում ենք մեր ընկերոջ անժամանակ կորուստը:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության
Քանդաղեստական խորհուրդ

Հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, չորեքշաբթի ժամը 17:00-ին, Նորագավիթի Ս. Գեւորգ եկեղեցում, իսկ հուղարկավորությունը վաղը, ժամը 14:00-ին, նույն եկեղեցուց:

Բրայզայի թեկնածության...

1-ին էջից

Ակնհայտորեն ադրբեջանական աղբյուրներից օգտված խմբագիրը գրեթե նույնությամբ կրկնել է այն անհեթեթ ու տգեղ հայտարարությունները, որ Ադրբեջանում անում են սեփական ժողովրդին «թույլ եւ աղքատ Հայաստանի» պատկեր նկարելիս: Այլապես դժվար է լուրջ պարբերականի լուրջ խմբագրի գրչով ներկայացվածը լուրջ ընկալել. այն բոլոր ոլորտները, որոնցով ներկայացվում է Հայաստանը բավականին տխուր պատկերով, առավել անմխիթար են հարեւան Ադրբեջանում:

Թե ինչպես է Հայքն իր գլխում, հետո էլ թերթում տեղավորել դատողություններ ու համեմատություններ, թե ինչ աստիճանի է կոռումպացված Հայաստանը կամ զարգացման մակարդակով որ տեղում է գտնվում, ոչ թե ազգային շահերի, այլ կոնկրետ պատվիրատուի առկայության կասկածների տեղիք է տալիս, քանի որ իսկապես կոռուպցիայի լուրջ խնդիրներ ունեցող Հայաստանի կողքին Ադրբեջանն ուղղակի կոռուպցիայի որջ է, մի երկիր, որտեղ կենտրոնասիական երկրների տրամաբանությամբ դեռեւս կիսաֆեոդալական իրականություն է տիրում:

Ակնհայտ է, որ պարբերականի հոդվածն ուղղված է նախ եւ առաջ Ամերիկայի Հայ դատի գրասենյակի դեմ, ի դեմս որի Հայքը նկատել է «դոգմատիզմով» «տաք, երբեմն էլ անարդյունավետ ջանքեր» գործադրող մի կառույց, մինչդեռ Հայքի հարվարդյան կրթությունը փաստացի բավարար չէ հակառակվելու այնպիսի մի իրողության, ինչպիսին Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերն են ողջ աշխարհում:

Իսկ որ Ադրբեջանում մեկ շնչին ընկնող եկամուտն, ըստ նույն Հայքի, մի քանի անգամ գերազանցում է նույն ցուցանիշը Հայաստանի համար, թող չմտահոգի պարբերականի խմբագրին, քանի որ երկու երկրում էլ այդ ցուցանիշը որեւէ առնչություն չունի բնակչության հետ, այլ վկայում է զգալի միջոցների առկայության մասին, որ, սակայն, տեղավորվել է մի քանիսի գրպանում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

ԱԶԳ

Անցուդարձ

Բանկե՞րն են մեղավոր, թե՞ գյուղացիները

Պատմություններ չմարած վարկերի պատճառով ծանր վիճակում հայտնված մարդկանց մասին

Բաց հասարակության հիմնադրամը եւ «Հեռաֆոնող լրագրողներ» ՀԿ-ն երեկ ֆոնարկում էին կազմակերպել՝ նվիրված Հայաստանում գյուղատնտեսական ժամկետանց վարկերի շուրջը ստեղծված խնդիրներին: Ինչպես հայտնեցին միջոցառման կազմակերպիչները, իրենց պատմությունները չմարած վարկերի պատճառով ծանր վիճակներում հայտնված մարդանց մասին լուրջ մեղադրանքներ են բանկերին, որոնցից ոչ մեկը դրանց չի արձագանքել: Այդուհանդերձ, ֆիչ անց Բաց հասարակության հիմնադրամի ներկայացուցիչն ասաց, որ բանկերին ուղղված մեղադրանք չկա, այլ խոսքը ստեղծված խնդրի լուծման ուղիներին է վերաբերում:

Ըստ «Հեռաֆոնող լրագրողների»՝ 2 տարվա ընթացքում իրենց լրագրողները եղել են 70 գյուղերում եւ 240 հոդվածներ գրել այս թեմայով: Կազմակերպության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2010-ին վարկերի մարման հետ կապված 12109 կասարողական վարույթ է հարուցվել ԴԱՀԿ-ի կողմից: Եղել են դեպքեր, երբ մարդիկ, վարկ վերցնելով մի բանկից՝ չեն կարողացել մարել, մյուսից են վերցրել՝ նախորդ վարկը մարելու համար եւ այդպես շարունակ՝ ավելի բարդացնելով իրենց դրությունը: Կամ վարկ են վերցրել մի տոկոսադրույքով, հետո վճարել այլ տոկոսադրույքով: Մեկ այլ դեպքում կինը հղիացել է, որպեսզի ծնված երեխայի գումարով վարկը մարի: Գյուղացիներն, ըստ հեռաֆոնող լրագրողների, տուժում են նաեւ փոխարժեքի տատանումների պատճառով արտարժույթով տրված վարկերից: Բանկերին ներկայացված հանդիմանությունն այն էր, որ ոչ մի դեպքում բանկերը զիջման չեն գնացել:

Գյուղատնտեսության հիմնական վարկավորող բանկի «ԱԿԲԱ կրեդիտ ագրիկոլ բանկի» փոխտնօրեն **Հակոբ Անդրեասյանն** անդրադարձավ բարձրացված հարցերին: Նա նշեց, որ իրենց բանկը ստեղծման պահին 1996-ին 36 տոկոսով վարկ է տրամադրել, երբ շուկայական տոկոսադրույքը 120 տոկոս էր: Այդ ժամանակ գյուղացիները ցանքի համար այդ գումարների կարիքն ունեին, եւ բանկը տրամադրել է դրանք: «Վա՞տ է, որ տրամադրել ենք», հարց ուղղեց նա, ասելով, որ հետագայում տոկոսներն իջել են եւ հիմա շատ ավել ցածր են: Նա ընդգծեց, որ շուկայական տոկոսներից ցածր որեւէ ծրագիր սովորաբար չի շարունակվում եւ որեւէ մեկը պետք է փոխհատուցի բանկին արտոնյալ վարկի պակասող գումարը, ինչպես դա արվեց այս տարի պետության կողմից: Հակոբ Անդրեասյանը նաեւ հայտնեց, որ վարկերի 80 տոկոսը գյուղացիներին տրամադրվում է առանց գրավի՝ երաշխավորագրերով եւ կասարողական վարույթում գտնվող գործերի մեծ մասն էլ փոքր գումարներ են: Փաստելով, որ գյուղատնտեսությունը շատ ռիսկային ոլորտ է, նա միաժամանակ նշեց, որ մեր գյուղացիները պատրաստ չեն բերքի ապահովագրման համար վճարել: Բանկի ներկայացուցչի հավաստմամբ՝ արտարժույթով տրված վարկերի դեպքում էլ փոխարժեքի տատանումների ժամանակ տուժում են ոչ միայն գյուղացիները, այլ բոլորը:

Գյուղացիական տնտեսություններին միավորող կազմակերպությունների ներկայացուցիչներն էլ ստեղծված վիճակի կապակցությամբ կոչ են անում միտինգ անել, միաժամանակ նշելով, որ գյուղացիներից ոչ ոք չի ցանկանում դրան միանալ:

Լրագրողների հարցերին պատասխանելով՝ գյուղատնտեսության փոխնախարար **Ռոբերտ Մակարյանն** այն կարծիքը հայտնեց, որ վարկ վերցնելուց առաջ սուբյեկտը պետք է մտածի՝ կարո՞ղ է մարել, թե՞ ոչ: Մյուս կողմից էլ՝ վերցված վարկը պետք է նպատակային օգտագործվի, մինչդեռ հաճախ գյուղատնտեսական վարկերը վերցնելիս, դրանք ծախսել են կենցաղային կարիքների համար: Համենայն դեպս, փոխնախարարը այս առնչությամբ ստեղծված իրավիճակից դուրս գալու տեսանելի տարբերակներ չի տեսնում:

Վերադառնալով երեկ կազմակերպված քննարկման թեմային, հարկ է նշել, որ ներկայացված խնդիրն ավելի շուտ նկարագրական բնույթ ուներ: Մինչդեռ երեւույթի իրական պատճառները գտնվում են տնտեսական քաղաքականության, տնտեսության տրամաբանության եւ մարդկանց մտածելակերպի առանձնահատկությունների մեջ: Մասնավորապես, հարկ է նկատի ունենալ, բանկերը առեւտրային կառույցներ են, եւ նրանց նպատակը շահույթ ստանալն է: Երբ բանկերն իրենց գումարն են ցանկանում հետ ստանալ, դրա համար անիմաստ է նրանց մեղադրել, բացառությամբ, երբ խաբեություն է տեղի ունենում: Ճիշտ չէ նաեւ իրավացի համարել այն մարդկանց, ովքեր վարկ են վերցնում եւ չեն ցանկանում կամ կարողանում այն վերադարձնել: Նրանց կարելի է կարեկցել, օգնել հնարավորության դեպքում, բայց նրանք երբեք իրավացի չեն: Ամեն մարդ պետք է իր որոշումների պատասխանատվությունն ինքը կրի, այլ ոչ թե բարդի ուրիշի վրա եւ ճիշտ համարվի: Կոնկրետ՝ գյուղացիների եւ գյուղատնտեսության դեպքում պետությունը պետք է առանձնահատուկ մոտեցում ցուցաբերի: Գյուղվարկերի տոկոսների մի մասին սուբսիդավորումն այս տարի նման մոտեցման դրսեւորումներից էր, ցանկալի է, որ այն շարունակվի եւ ունենա նաեւ այլ դրսեւորումներ:

ԱԲԱ ՄԱՐՏԻԲՈՍՅԱՆ

Կա ծրագիր, որով որոշվում է մեքենայի արագությունը վթարի պահին

Վարորդների իրավունքների պաշտպան «Ամիլլես» հասարակական կազմակերպության ղեկավար Էդուարդ Հովհաննիսյանը երեկ ասուլիսին հայտարարեց, որ իրենց ՀԿ-ի աշխատակիցները անցնող տարում սովորել են ծրագիր, երբ մի քանի ելակետային տվյալներ մուտք անելով, հնարավոր է համակարգչով որոշել մեքենայի արագությունը վթարի պահին: Ըստ Էդուարդ Հովհաննիսյանի՝ այսօր էլ մեր ճանապարհային ոստիկանությունը հայտարարում է, թե հնարավոր չէ իմանալ մեքենայի արագությունը՝ վթարի պահին, այնինչ այս ծրագրի շնորհիվ հնարավոր է իմանալ:

Վարորդների իրավունքների պաշտպան ՀԿ-ի ղեկավարը նկատեց, որ այս ծրագիրը պետք է ընդունեն դատարանները, ապահովագրական ընկերությունները և ճանապարհային ոստիկանությունը:

«Ամիլլես»-ի գործերին անդրադառնալով՝ Հովհաննիսյանը նշեց, որ իրենք դատարաններում պաշտպանել են ավտոտերերի իրավունքները 400 գործերում՝ վերջին երեք տարիների ընթացքում: Գործերը հիմնականում վերաբերում են ճանապարհային նշանների՝ սխալ տեղում լինելուն, անհիմն վերագրված խախտումներին:

Սակայն ընդհանուր առմամբ ՀԿ-ի ղեկավարն ընդգծեց, որ նկատվում է վարորդ-ճանապարհային ոստիկան հարաբերությունների բարելավվում. «Քաղաքացիները ՃՈ-ից ավելի քիչ են այսօր բողոքում, քան նախկինում էր», վստահեցրեց Հովհաննիսյանը:

Հ. Ա.

ԸՍՏ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Նոյեմբերին տնտեսական ակտիվության 2,4 տոկոս աճ

Սակայն հոկտեմբերի նկատմամբ արշանագրվել է 7,3 տոկոս անկում

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2011-ի նոյեմբեր ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա նոյեմբերի համեմատ գրանցել է 2,4 տոկոս աճ: Սակայն նախորդ ամսվա՝ հոկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 7,3 տոկոս անկում: Հիշեցնենք, որ սկսած այս տարվանից, Ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես, դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը:

Արդյունաբերությունը շարունակում է տնտեսական ակտիվության աճի հիմնական շարժիչ ուժը լինել: Նոյեմբերին աճն այստեղ կազմել է 18,8 տոկոս, իսկ նախորդ ամսվա հոկտեմբերի համեմատ՝ 4,1 տոկոս: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճել է 6,3 տոկոսով, իսկ այս տարվա հոկտեմբերի նկատմամբ նվազել՝ մոտ 63 տոկոսով, ինչը, բնականաբար, սեզոնային գործոնի հետեւանք է: Շինարարությունը նոյեմբերին արձանագրել է 13,2 տոկոս անկում, բայց այս տարվա հոկտեմբերի համեմատ աճել է 28,8 տոկոսով:

Մանրածախ առեւտրում արձանագրվել է 3,4 տոկոս աճ անցյալ տարվա նոյեմբերի համեմատ, իսկ այս տարվա հոկտեմբերի նկատմամբ՝ 2,1 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա նոյեմբերի նկատմամբ աճը կազմել է 4,4 տոկոս, իսկ այս տարվա հոկտեմբերի նկատմամբ անկումը՝ 6,8 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է 61,8 տոկոսով, իսկ հոկտեմբերի նկատմամբ՝ 41,8 տոկոսով: Այստեղ նույնպես առկա է սեզոնային գործոնը:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի նոյեմբերին 2010-ի նոյեմբերի նկատմամբ ավելացել է 10,2 տոկոսով եւ կազմել 504,5 մլն դոլար, իսկ նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ՝ 0,1 տոկոսով: Արտահանումը կազմել է 124,1 մլն դոլար, արձանագրելով 22,3 տոկոս աճ, իսկ նոյեմբերին հոկտեմբերին նկատմամբ՝ 9,9 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 380,4 մլն դոլար, նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճելով 6,7 տոկոսով, իսկ այս տարվա հոկտեմբերի համեմատ՝ նվազել 12,8 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը նոյեմբերի հոկտեմբերին բարելավվել է, կազմելով 256,3 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում նոյեմբերին կազմել է 114 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 141 հազար դրամ, պետականում՝ 92 հազար դրամ:

Այսպիսով, վերջին երկու ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ թեեւ տնտեսական ակտիվությունն աճել է, բայց նույն տարվա նախորդող ամիսների համեմատ՝ նվազել: Դրականն արդյունաբերության շարունակվող աճն է: Դեկտեմբերին, բնականաբար, հոկտեմբերի եւ նոյեմբերի համեմատ տնտեսական ակտիվությունն ավելի բարձր կլինի՝ պայմանավորված նախատոնական աշխուժությամբ:

Ա. Մ.

Քաղաքաշինության խորհրդի կազմը կվերանայվի

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը երեկ այցելել է Ճարտարապետների միություն: Կարեւորելով կառույցի նշանակությունը քաղաքաշինության ոլորտում՝ քաղաքապետը հայտարարել է, որ այսուհետեւ քաղաքապետարանի եւ միության համագործակցությամբ բազմաթիվ խնդիրների լուծումներ կգտնեն:

Անդրադառնալով մայրաքաղաքում իրականացվող քաղաքաշինական նախագծերին՝ քաղաքապետն ընդգծել է, որ քաղաքաշինական խորհուրդը պետք է լսի նաեւ հասարակության կարծիքը:

«Առաջիկայում կվերանայվի քաղաքաշինության խորհրդի կազմը, ուր ճարտարապետներից եւ նեղ մասնագետներից բացի, նախատեսում ենք ընդգրկել հասարակական ակտիվ շերտերի, այդ թվում նաեւ բնապահպանների, երիտասարդական կառույցների եւ ոլորտի հետ առնչվող այլ կազմակերպությունների ներկայացուցիչների, որպեսզի հաշվի առնվեն բոլորի կարծիքները», ասել է քաղաքապետը:

Կառուցապատման խնդրի վերաբերյալ Մարգարյանն ասել է, որ բոլոր խոշոր քաղաքաշինական նախագծերն ու այս ուղղությամբ կատարվող ներդրումները նախատեսվում է կենտրոնից եւ փոքր կենտրոնից տեղափոխել այլ վարչական շրջաններ: Այս կերպ կթեթեւանա կառուցապատման ծանրաբեռնվածությունն ու կապահովվի քաղաքի համաչափ զարգացումը:

Հ. Հ.

Շնորհակալություն բուժանձնակազմին

Օգտվելով «Ազգի» ընձեռած հնարավորությունից՝ ցանկանում եմ խորին երախտագիտություն հայտնել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի բաժնի բժիշկ-վնասվածքաբաններ, իրենց գործի բարձրակարգ մասնագետներ, վիրաբույժներ Զավեն Մելիքյանին եւ Աշոտ Սարգսյանին, պրոֆեսիոնալ եւ հոգատար բուժքույրերին (Անահիտ, Փորուր, Գայանե, Ռուզան, Ամալյա, Անի) ու սանիտարուհիներին (Սուսաննա, Աստղիկ, Աննա, Սոնա): Նրանց շնորհիվ հնարավոր եղավ հաղթահարել մոտ՝ Սվետլանա Մարտիրոսյանին պատուհասած դժբախտ միջադեպի (ոտքի կոտրվածք երկու տեղից) հետեւանքները:

ԱԲԱ ՄԱՐՏԻԲՈՍՅԱՆ

ԱԶԳ

Դիտարկումներ

Մերոնք էլ կուզեին հարցեր ուղղել երկրի նախագահին

Վերջերս աչքիս ընկավ Հարութ Սասունյանի հրապարակումը, որտեղ «Կալիֆոռնիա կուրիերի» խմբագիրը զարմանում է, թե ոչ մի քաղաքական մեկնաբան Հայաստանում կամ այլուր այդպես էլ ուշադրություն չդարձրեց այն նկատելի առաջընթացին, որ կար Հայաստանի նախագահի՝ Մարսելում եղած ելույթի կարեւոր շեշտադրումներում, որտեղ Սերժ Սարգսյանը ներկայացրել է Թուրքիայի նկատմամբ Հայաստանի պահանջների կարգավորման նոր ռազմավարություն փաստորեն, եւ որտեղ առաջին անգամ ձեւակերպվել է արդարության պահանջ: Սասունյանը մեկնաբանում է, թե արդարություն բառը ներառում է հասցված վնասի վերացում այնքանով, որքանով դա հնարավոր է՝ բռնագրավված գույքի, գողացված ակտիվների, գրավված տարածքների վերադարձման պահանջի միջոցով:

Սասունյանի այս ոգեւորությունը կիսելով, քանի որ արդար հատուցման պահանջը աշխարհի բոլոր հայերի ուրսով է, վերադառնանք, սակայն, նախագահությունյան վեճի, երկրում առկա կոռուպցիայի գոնե մի փոքր հաղթահարման անհրաժեշտության, բանակում զինվորի աչք հանող ենթասպայի աչքը եւս հանելու առաջարկի եւ այլ հարցերի մասին: Հարցեր, որ ամեն օր ամեն ոք բարձրացնում է , եւ դրա պատասխանները կուզենար ստանալ երկրի նախագահից: Մինչդեռ երկրի նախագահը ժողովրդի հետ շփվելու որեւէ ձեւաչափում առանձնապես աչքի չի ընկել, նախագահին հարց ուղղելու եւ պատասխան ստանալու դեպք, փաստորեն, որքան էլ հիշողություն լարենք, դժվար թե որեւէ մեկը կարողանա հիշել: Լավագույն դեպքում՝ մի քանի լրագրողի, այն էլ նախապես ճշված հարցերին մեկ-երկու անգամ նախագահը պատասխանել է ու վերջ: Իսկ շատ ու շատ հարցերի վերաբերյալ նախագահի դիրքորոշումը Հայաստանի հասարակությունը ստանում է արտերկրի մամուլից՝ նրա՛նց տրված հարցազրույցներով, կամ արտերկրի ամբիոններում նախագահի հնչած խոսքից: Հեր օրհնած, ա՛յս ժողովրդի նախագահն է, ու նախ ա՛յս հասարակության առաջ առիթից առիթ պետք է տեսակետներ հայտնի մեր նախագահը, ու հետո արդեն սեփական երկրում հայտնված տեսակետը՝ լավ մեկնաբանված, վերլուծաբանների գնահատականներին արժանացած, արտերկիր տարվի:

Թեեւ գիտենք, որ ռուսները Պուտինին միանշանակ չեն ընդունում, սակայն եւ նա, եւ Մեդվեդեւը այս էլ քանի տարի նստում ու ժամերով սեփական երկրի քաղաքացիների հարցերին են պատասխանում՝ չխուսափելով ամենատհաճներից: Նույնը կուզեինք տեսնել մեր նախագահի դեպքում, քանի որ սեփական երկրի քաղաքացիների տհաճ հարցերից խուսափողը աղահովագրված չէ արտերկրից տրվող էլ ավելի տհաճ հարցերից: Կուզեինք մարդկանց շատ լայն շրջանակի՝ նախագահ Սարգսյանին հարցեր ուղղելու իրավունքն իրականացված տեսնել, մինչդեռ նա վաղուց փաստորեն անգամ լրագրողների լայն շրջանակի հետ չի շփվել: Նախագահական առաջին մեկ-երկու ասուլիս սկզբում էլի եղան, թեեւ լրագրողների հարցերի այդ ասիճանի նախապատրաստումը, դրանց նախագահականի թրի տակով անցկացումը, ինչպես այն ժամանակ եղավ, լրագրողների մեծ մասի համար պարզապես անընդունելի էր: Հասկանալի է, որ եթե հասարակությունը կամ լրագրողական հանրույթը շատ հարցեր ունեն, դրան կանոնակարգել պետք է՝ զուտ համակարգման առումով, սակայն մերոնք պետք է սովորեն ավելի ազատ աշխատել՝ հարցերի վերջնական ձեւակերպում պահանջելը կամ հարցերի հերթականություն սահմանելը քանակեցորդ դարում արդեն ատավիզմ է:

Ահա եւ հերթական տարին անցավ, մարդիկ իրենց հուզող շատ հարցեր այդպես էլ հրապարակավ երկրի նախագահին ուղղել եւ նրանից պատասխան լսել այս անգամ էլ չկարողացան: Հավանաբար անգամ ամփոփիչ ասուլիս չի լինի՝ կարծես այդ ավանդույթը եւս մոռացվում է (խոսքը մի քանի հեռուստամեկնաբանով իբր ասուլիսի մասին չէ), իսկ, ասենք, Հանրապետական կուսակցության համագումարին, այս կամ այն այցին կամ այսուայն առիթով երկրի նախագահի արտահայտած տեսակետը մի տեսակ թույլ չի տալիս հեռապատկեր ձեւավորել, հասկանալ՝ ի՞նչ է սպասվում մեզ բոլորիս վաղը:

Օրինակ՝ հասարակությունն այս տարի շատ ու շատ հարցերի շուրջը տուրեւառումների մեջ էր եւ ուղիղ պատասխան այդպես էլ չունեցավ, ասենք, այն մասին, թե ինչո՞ւ էր նոպատակահարմար կամ աննպատակահարմար ՀԱԿ-ի հետ կոալիցիայի երկխոսությունը, կամ ի՞նչ ձեւաչափով է պատկերացնում ՀՀԿ նախագահ-երկրի նախագահը, անկախ զանազան հուշագրերից, ընտրություններին մասնակցությունը, արդյոք ի՞նչ վերաբերմունքի է սպասում այդ իմաստով իր կոալիցիոն կուսակիցներից, կամ արդյոք ի՞նչ հույս պետք է ունենա ոչ կուսակցական հայ մարդը 2012 թվականի իր սպասումներում, կամ արդյոք ի՞նչ վերաբերմունք կա երկրի նախկին նախագահի հանդեպ՝ որպեսզի մեկնաբաններն ազատվեն էպիսոդյար մեկնաբանական տառապանքից:

Իհարկե դժվար է մի երկրի նախագահի համար պատասխանել շատ հարցերի, քանի որ տվյալ երկրում կուտակված պրոբլեմները միատեղ, հարցերի ձեւով կարող են սիրտ ճաքեցնել: Կարող են հաճախ դրանց միանշանակ պատասխանները չգտնվել: Մի քանի մարդ բանկերում 444 մլրդ դրամ ավանդ ունի, բայց այս տարվա հունվար-սեպտեմբերի մանրածախ առեւտրաշրջանառությունը 2,8 տոկոս է, այսինքն մեկը կարող է հարց տալ՝ երկրի նախագահ ես ու սիրված ես պատասխանել, որ մարդիկ բան չեն առնում, քանի որ աղքատ են, ու մի քանի հարուստի փող է «ֆռռում» բանկերում: Որ բնակչությանդ 1/3-ն աղքատ է, ու նրան օգնություն ձեթ է բաժանվում: Որ...որ...որ...

Բայց պատասխանել պետք է, պատասխանելը չպատասխանելուց լավ է, եւ հասարակ մարդը ջերմ խոսքին անգամ խաբվում է, ջերմ խոսքից անգամ իրեն մարդ է զգում:

Ահա այս էի ուզում ասել՝ ի պատասխան Հարութ Սասունյանի զարմանքի:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱԿԱՏԱԳՐԵՐ

Կորեական ճակատագիր՝ հայկական ազգանունով

Անահիտ Լուսյան: Այսպես է այն կորեացի որբի անունը, ում պատերազմը բերեց Խորհրդային Հայաստան, ապա նրան որդեգրեց հայկական ընտանիք, ու նրա ճակատագիրը հավերժական թելերով կապվեց հայ անվան հետ: «Ես 42 տարեկան էի, երբ իմացա, որ իմ ծնողները ինձ որդեգրել են: Նրանք երդվել էին իմ կյանքի գաղտնիքը իրենց հետ գերեզման տանել, իսկ ես երբեք չեմ էլ զգացել», պատմում է տիկին Անահիտը:

Երբ սկսվեց կորեական պատերազմը, հազարավոր որբուկների դուրս բերեցին այդ երկրից, եւ նրանք սփռվեցին աշխարհով մեկ: Տիկին Անահիտին ճանապարհը բերեց Հայաստան: «Այստեղ բերել են 400 երեխա: Չգիտեմ՝ մեզ փողոցից են գտել, թե ինչ... Երբ ես իմացա իմ կյանքի ողջ եղելությունը, գնացի այն մանկատուն, ուր տեղափոխել էին մեզ: Այնտեղ գտա մի կնոջ, ով այդ տարիներին դայակ է աշխատել: Նա պատմեց, որ հենց մեզ մտցրեցին մանկատուն, վերեւից անմիջապես հրաման եկավ՝ մեր կորեական անունները փոխելու եւ դրանք հայկական դարձնելու: Ես դարձա Ղամբարյան Սիրանույշ»:

Փոքրիկին ճակատագիրը արդեն հաստատել էր ծանրագույն հարված՝ կտրելով իր արմատներից եւ ծննդավայրից, եւ ավելի չխոցելու համար, թույլ տվեց ընտանիք ունենալ: «Իմ փաստաթղթերից ոչինչ չի պահպանվել: Նույնիսկ չգիտեմ նախկին՝ կորեական անունս: Երբ գնացի պետական արխիվ, այնտեղ գտա հորս՝ իմ որդեգրման համար ներկայացրած դիմումը: Դա 1950 թվականն էր: Իսկ Նորքի մանկատանը, ուր պահվում էին մեզանից մնացած փաստաթղթերի ինչ-որ կտորներ, իմ ծննդյան թիվը գրված էր այսպես՝ 1948 թ. ?, հոկտեմբերի 1(15)»:

Որդեգրումից հետո կորեացի աղջնակին հայ ընտանիքը տալիս է Անահիտ անունը: Երկրաբանի ընտանիքը հյուրընկալ եւ ջերմ օջախ է դառնում նրա համար: Շրջապատում բոլորը գիտեին, որ հասարակ հայկական ընտանիքում մեծանում է Կորեայից Հայաստան բերված որբուկ, սակայն ոչ ոք արտառոց վերաբերմունքով աչքի չի ընկնում: «Հետագայում ընկերներս ինձ պատմեցին, որ երբ բակում խաղում էինք, ես երբեմն անհասկանալի բառերով նրանց էի դիմում, հավանաբար իմ բառապաշարում դեռեւս պահպանվել էր կորեական լեզուն», պատմում է տիկին Անահիտը:

Այսպես, մշտապես կապվելով հայկականի հետ, Անահիտ Լուսյանը ավարտում է դպրոցը, այնուհետեւ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանը: Ապագա ամուսինը նույնպես տեղյակ է լինում, որ իր կինը հայուհի չէ:

Տիկին Անահիտը, ծնողների մահից հետո իմանալով իր կյանքի պատմությունը, սկսում է հետաքրքրվել իր արմատներով: Նա դիմել է ռուսական «Սպասիր ինձ» հաղորդմանը իրեն օգնելու համար: «Նրանք ինձ պատասխանեցին, որ ես անձամբ պետք է Մոսկվա գնամ, իսկ դա այսօր ինձ համար այնքան էլ հասանելի չէ... Ինձ համար Հայաստանը իմ հայրենիքն է, բայց շատ կուզեի ծննդավայրս էլ տեսնեի, ծնողներիս գերեզման այցելեի, գուցե հարազատներ գտնեի...»:

Իսկ այն հարցին, թե ինչպես է այսօր աղրում Հայաստանի որդեգրյալը, Անահիտ Լուսյանը պատասխանեց. «Վաս: Ստանում եմ 21 հազար դրամ կենսաթոշակ: Դրանով դե արի ու աղրի: Ես երկու երեխա ունեմ, ովքեր ինձ օգնում են: Եթե նրանք չլինեին, իմ վիճակը շատ բարդ կլիներ: Ինձ խորհուրդ են տալիս դիմել պետությանը՝ օժանդակության խնդրանքով, սակայն քանի որ իմ իսկական փաստաթղթերը չկան, ես ոչինչ չեմ կարողանում ձեռնարկել»:

Սակայն տիկին Անահիտը սիրում է իր երկիրը, իրեն արդեն նրա մի մասնիկն է համարում. «Մշտական բնակության երբեք ոչ մի տեղ չեմ գնա: Ես ինձ հայ եմ համարում, քանի որ այդ տարիքից այստեղ եմ աղրել, կրթություն ստացել, ընտանիք կազմել: Ինձ այստեղի օդն ու ջուրը հայ են դարձրել»:

«Կորեայի որբ»... հավանաբար շատերս լսած կլինենք այդ արտահայտությունը: «Ես երբեք չեմ նեղվել որբ բառից: Երբ իմացա, որ ես որդեգրված եմ, շատ մեծ ակնածանքով լցվեցի հայ ծնողներիս հանդեպ, քանի որ եթե նրանք չլինեին, չգիտեմ իմ կյանքը ինչպես կստացվեր... Երեւի սա էլ իմ ճակատագիրն է...»:

ՆԱԻՐԱ ՎԵՐԴՅԱՆ

Եվրոպայի հայերի համագումարը ողջունում է Ադրբեջանի բնիկ փոքրամասնություններին

Թալիշ, լեզգի, ուդի, լաթ, ավար, ռութուլ, ցախուր... եւ այլք, այս բոլոր ժողովուրդները չնայած ապրում են իրենց հայրենիքում, սակայն նրանց ներկայացուցիչների անձնագրերում որեւէ խոսք չկա ազգային պատկանելության մասին, փոխարենը՝ Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի: Թե որքանո՞վ է սա մարդու իրավունքների խախտում, ազգային խտրականության քաղաքականություն, ժողովուրդներին ձուլման ենթարկում, եւ թե որքանո՞վ «այս ամենի հեղինակ» Ադրբեջանի հանրապետությունը իրավունք ունի «Արցախ պահանջելու», այլ խոսակցություն է: Պարզապես հիշյալ ժողովուրդների ներկայացուցիչները որոշ ժամանակ առաջ համատեղ հայտարարություն էին հեղինակել, որտեղ մասնավորապես փաստվում էր. «Ադրբեջանում բնիկ ազգերին զրկել են մայրենի լեզվով խոսելուց, երգելուց, իրենց պատմությունը ուսանելուց եւ թույլ չեն տալիս պահել ու զարգացնել սեփական մշակույթն ու արվեստը...»:

Երեկ Եվրոպայի հայերի համագումարը հանդես է եկել հիշյալ ժողովուրդներին ուղղված համերաշխություն-հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ընդգծվում է. «Դուք ձեր կերտած հայրենիքում այսօր միեւնույն հալածանքներին եք ենթարկվում, ինչ տասնամյակներ շարունակ ենթակա էր Արցախ-Ղարաբաղի ժողովուրդը: Ինչպես դուք, նույնպես եւ հայերը Բաքվի իշխանությունների սիստեմատիկ հալածանքների, մշակութային ոչնչացման եւ ձուլման քաղաքականությունը չեզոքացնելու համար ստիպված դիմել են ինքնապաշտպանության... Ձեր կոչը, ինչպես արդարորեն նշում եք, թող լինի Կովկասի ժողովուրդների խաղաղ կյանքի հայտը եւ դատապարտողը Բաքվի իշխանությունների ռազմատենչ ու պատերազմ հրահրող անպատասխանատու ամենօրյա կոչերին»:

Հայտարարության մեջ Եվրոպայի հայերի համագումարը նաեւ ընդգծում է, որ՝ «լինելով 1915-ին թուրքական յաթաղանից՝ Ցեղասպանությունից մազապուրծ հայ ժողովրդի ժառանգորդների մի մասնիկը», ամբողջովին զգում եւ հասկանում է այդ ժողովուրդների կրած ամենօրյա հալածանքն ու տառապանքը. «Ուստի դատապարտելով Բաքվից ձեր ժողովուրդների նկատմամբ ճնշումներն ու հալածանքները, հայտնում ենք մեր համերաշխությունն ու պահանջում ենք միջազգային հանրությունից, եվրոպական համապատասխան կառույցներից, ճնշված ժողովուրդների պաշտպանության սկզբունքից ելնելով, համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ադրբեջանական իշխանությունների սանձարձակ ճնշումներն ու հալածանքները կանխարգելելու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքները հարգելու եւ դրանց վերականգնման համար»:

Հ. Ա.

Ադրբեջանը մատնում է իրեն

Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի շուրջը «հեղինակավոր» կարծիք է արտահայտում նաեւ ադրբեջանական կողմը: Այն, իհարկե, բառացիորեն կրկնում է Ահմեդ Դավութօղլուի «մեծահոգությունը եւ պատրաստակամությունը՝ համատեղ նաեւ մի փոքր առաջ են անցնում եւ գտնում, որ «հարկ է հնարավորություն տալ, որ ամբաստանվող կողմն էլ իր հակափաստարկները ներկայացնի»: Այսինքն, Ֆրանսիայի Ազգային ժողովը «պետք է հրապարակային դատավարություն կազմակերպի եւ լսի մեղադրող ու պաշտպանող կողմերին»:

Սա միայն առաջին հայացքից է «աբսուրդի թատրոն»: Ակնարկն այն մասին, որ Ֆրանսիայում ապրող «շուրջ կես միլիոն թուրքերը զրկվում են իրենց նախնիներին վերագրվող հանցանքի դեմ բողոք արտահայտելու իրավունքից», ըստ էության հուշում է, որ փորձ է արվում խնդիրը տեղափոխել մի հարթություն, որտեղ «առաջնային կարող է դառնալ ներֆրանսիական կայունության» գործոնը:

Նրանք, որ կամովին թուրքական քաղաքացիությունը փոխել են ֆրանսիականով, հազիվ թե շահագրգռված լինեն «իրենց նախնիների դատը պաշտպանելու» գաղափարով: Շատ արտառոց է, որ Ֆրանսիայի իշխանություններին այդ կարգի «սպառնալիք» հասցեագրում է Բաքվի քարոզչությունը: Կարելի է ենթադրել, որ Թուրքիան եւ Ադրբեջանը որոշակի «դերաբաշխում են կատարել». Անկարան իրեն վերապահել է «արժանապատիվ խաղացողի», իսկ Ադրբեջանին՝ «գժի» իմիջ:

Այն, ինչ Թուրքիան նպատակահարմար չի գտնում հնչեցնել, անում է Ադրբեջանը: Միաժամանակ էլ Բաքուն խնդիրը զուտ իրավական կամ բարոյական հարթությունից ճգնում է տեղափոխել ղարաբաղյան կարգավորման հարթություն: Ադրբեջանում «կասկածում են Ֆրանսիայի անաչառությանը»: Թեեւ Փարիզում վերջերս «բեմադրված մեկ դերասանի ներկայացմանը» մասնակցել եւ «հեղինակավոր կարծիք էր հայտնել» ԵԱՀԿ ՄԽ ֆրանսիացի համանախագահ Ֆասիեն: Վերջինս հարմար էր գտել անգամ հրաժեշտի այցով այցելել Բաքու:

Հիմնական տպավորությունն այն է, որ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի ընդունումը չի առնչվում ղարաբաղյան կարգավորման բանակցություններին: Ֆրանսիան մինչ այդ էլ կատարածը որակել էր ցեղասպանություն: Սակայն դրանից չի հետեւում, թե ԼՂ հարցում այդ երկիրը միանշանակորեն սատարում է հայկական կողմերի ընկալումներին:

Մանրամասնությունների մեջ չխորանալով՝ կարելի է ասել մի բան. Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելով՝ Ֆրանսիան պետականորեն կընդունի, որ օսմանյան Թուրքիայի հայ քաղաքացիների հանդեպ գործադրված բռնությունների փաստը որեւէ մակարդակում քննարկման առարկա չէ: Թուրքիան, եթե իրեն համարում է Օսմանյան կայսրության իրավահաջորդ, պարտավոր է պատմությունն ընդունել այնպես, ինչպես եղել է:

Այս դեպքում ինչո՞ւ է անհանգստանում Ադրբեջանը: Պատասխանը միանշանակ է. քանի որ Ադրբեջան կոչվող պետությունը չէր կազմավորվի եւ գոյություն չէր ունենա, եթե օսմանյան կառավարությունը 1918թ. ամռանը ռազմական արշավ չկատարեր դեպի Արեւելյան Անդրկովկաս: Իսկ այդ արշավը Թուրքիան չէր կատարի, եթե մինչ այդ կայսրության այսպես կոչված «արեւելյան նահանգները մաքրած չլիներ անցանկալի տարրից»: Այսինքն՝ չիրականացրած լիներ արեւմտահայության ցեղասպանություն:

Հարցի նկատմամբ Ադրբեջանի սրված շահագրգռվածության պատճառն, այսպիսով, ակնհայտ է. հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների խնդիրը ներառում է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլեւ ողջ Արեւելյան Անդրկովկասի հանդեպ հայության օրինական պանջատիրությունը: Իսկ դա իր հերթին հարցականի տակ է դնում ներկայումս Ադրբեջան կոչվող պետության օրինականությունը՝ դրանից ենթադրվող հեռագնա ենթադրություններով հանդերձ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԿԸՀ-ն գրանցել է Պուտինի թեկնածությունը

ՌԴ ԿԸՀ-ն գրանցել է վարչապետ Վլադիմիր Պուտինի թեկնածությունը 2012 թ. մարտի 4-ին կայանալիք նախագահական ընտրությունների համար: Պուտինի թեկնածությունն առաջադրել է «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը, որի առաջնորդն է ինքը:

ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ գրանցման նպատակով ԿԸՀ-ին փաստաթղթեր են ներկայացրել նաեւ «Արդար Ռուսաստանի» առաջնորդ Սերգեյ Միրոնովը, ՌԼԴԿ առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին եւ ՌԴԿԿ առաջնորդ Գենադի Զյուգանովը: Նրանց թեկնածությունները կհաստատվեն մոտ ժամանակներս:

ԿԸՀ-ն փաստաթղթեր է ընդունել նաեւ 5 նախաձեռնող խմբերից, որոնց թեկնածուներն են գործարար Միխայիլ Պրոխորովը, Վլադիվոստոկի նախկին քաղաքապետ Վիկտոր Ցեռեպկովը, Իրկուտսկի մարզի նահանգապետ Դմիտրի Մեզենցեւը, օրենքուրգցի Ռինատ Խամիեւը եւ չգրանցված «Կամք» կուսակցության առաջնորդ Սվետլանա Պեռնովան: Նրանք, ինչպես նաեւ «Յաբլոկո»-ի առաջնորդ Գրիգորի Յավլինսկին, ստիպված են իրենց օգտին հավաքել երկուական միլիոն ստորագրություն:

ԲԱԴԱԴ

Իրաքի փոխնախագահի ձերբակալման կարգադրություն

ԱՄՆ-ը պահանջում է «քաղաքական խաղաղ լուծում»

Իրաքի դատարանը կարգադրել է ձերբակալել փոխնախագահ Թարիք ալ Հաշեմիին, նրան ամբաստանելով հակահաբեկչական օրենսդրության խախտման մեջ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ներքգործնախարարը պետական հեռուստատեսության եթերում պատմել է, որ ալ Հաշեմիի թիկնապահները ծրագրում էին ահաբեկչական գրոհներ, իսկ փոխնախագահը ֆինանսավորում եւ աջակցում էր նրանց:

Ալ Հաշեմիի երկու թիկնապահներին ձերբակալել են կիրակի օրը, երբ նրանք «մտադրվել էին փոխնախագահի հետ օդանավ նստել Քրդական ինքնավարություն թռչելու նպատակով»:

Սունիի փոխնախագահի հասցեին մեղադրանքներ սկսեցին հնչել երկրում քաղաքական դիմակայության սրման պայմաններում, որոնք համընկան Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման: Հակամարտ կողմերն են ալ Հաշեմիի ու փոխվարչապետ Սալեհ ալ Մուլթաքի «Իրաքիա» սունիական կուսակցության կողմնակիցները եւ շիա վարչապետ Նուրի ալ Մալիքիի հետեւորդները:

Թարիք ալ Հաշեմիին ձերբակալելու կարգադրությունը մտահոգել է ԱՄՆ-ին: Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Վիկտորիա Նուլանդը լրագրողներին հայտարարել է, որ ձերբակալման կարգադրությունը համընկավ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման հետ: Նուլանդի խոսքերով՝ Իրաքի քաղաքական ուժերը «պարտավոր են իրենց տարաձայնությունների լուծումը գտնել քաղաքական խաղաղ միջոցներով, երկխոսությամբ, հիմք ընդունելով օրենքի գերակայությունը»:

Ընդդիմությունն Ասադին սպառնում է օտարերկրյա միջամտությամբ

Սիրիայի նախագահ Բաշար Ասադի ընդդիմադիրներին միավորող Ազգային խորհուրդը հայտարարել է, որ հակված է ընդունելու Սիրիայի գործերին օտարերկրյա ռազմական միջամտության գաղափարը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ազգային խորհրդի առաջնորդ Բուրհան Գալիունի խոսքերով՝ եթե կառավարական ուժերի կոշտ գործողությունները շարունակվեն, ապա ընդդիմությունն արաբական երկրներից օգնություն կխնդրի ցուցարարներին պաշտպանելու համար: Գալիունը ընդգծել է, որ խոսքը Սիրիայի միայն որոշ շրջաններում ուժի սահմանափակ կիրառության մասին է:

Ֆրանսպրեսը նշում է, որ տվյալ հայտարարությունները սիրիացի ընդդիմադիրների մարտավարության փոփոխման վկայությունն են: Անցյալում Ազգային խորհուրդը պահանջում էր միայն Ասադի վարչակարգի միջազգային մեկուսացում եւ դրա տապալում ներքին ընդդիմության փողոցային ելույթների միջոցով:

Գալիունի կարծիքով, Արաբական լիգայի դիտորդներին Սիրիա թողնելու Ասադի համաձայնությունը լոկ խորամանկություն է, որի նպատակն է ժամանակ շահել եւ թույլ չտալ ՄԱԿ-ի ԱԽ-ում սեփական գործողությունների կոշտ գնահատում:

Ի դեպ, ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովը երեկ ընդունած բանաձեւով դատապարտել է Սիրիայի իշխանությունների գործողությունները ընդդիմության ելույթների ճնշման ժամանակ, ՄԱԿ-ում Սիրիայի ներկայացուցիչները բանաձեւն անվանել են իրենց երկրի դեմ ուղղված «դիվային դավադրություն»:

Լիխտենշտեյնը միացավ Շենգենյան համաձայնագրին

Գաճաճ պետություն Լիխտենշտեյնը միացել է Շենգենյան համաձայնագրին, հաղորդում է New Europe կայքէջը: Շենգենյան գոտու մյուս երկրների հետ Լիխտենշտեյնի սահմաններում ստուգումները վերացվել են: Եվրոմիության ներկայացուցիչները հայտարարել են, որ բաց սահմաններին վերաբերող համաձայնագիրն այժմ ընդգրկում է 26 պետություն, որոնցում ապրում է 400 մլն մարդ:

Լիխտենշտեյնի անդամակցության համաձայնագիրը ստորագրվել էր 2008-ին, բայց սահմանային վերահսկողության վերացումը մի քանի անգամ հետաձգվել էր Գերմանիայի եւ Շվեդիայի առարկությունների պատճառով. այդ երկրները հայտարարում էին, թե իշխանապետությունը բավարար ակտիվությամբ չի պայքարում հարկումից խուսափողների դեմ:

Իրավիճակը փոխվեց դեկտեմբերի 13-ից հետո, երբ Եվրոպայի խորհուրդը որոշեց, որ իշխանապետությունը պատրաստ է ամբողջությամբ կատարելու համաձայնագրում նախատեսվող պարտավորությունները:

Շենգենյան համաձայնագիրը 1985-ին ստորագրեցին ԵՄ 5 երկրներ՝ Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը: Հետագայում բաց սահմանների պայմանագրին հարեց ԵՄ պետությունների մեծ մասը, բացի Մեծ Բրիտանիայից, Իռլանդիայից, Բուլղարիայից, Ռումինիայից եւ Կիպրոսից: Շենգենյան գոտու մեջ մտնում են նաեւ ԵՄ անդամ չհանդիսացող Նորվեգիան, Իսլանդիան, Շվեյցարիան եւ Մոնակոն:

«Ահա թե ինչու եմ ես այստեղ»

Մոնտե Կառլոյում վերջերս կայացած ջազ-փառատոնի վերջին ակորդների փայլը երաժշտական երկու տաղանդավոր անհատականությունների ավարտական մուտքն էր բեմ: Նրանցից մեկը ծնունդով Գյումրիից, այժմ Մ. Նահանգներում բնակվող հայ դաշնակահար **Տիգրան Համասյանն** էր, մյուսը իսրայելցի կոնտրաբասիստ **Ավիշայ Կոհենը**: Մոնտե Կառլոյի նրանց երաժշտական հայտնությունը իսկապես տոնական ավարտ ապահովեց ջազի լեզուն երկու ժողովուրդների երաժշտական ֆոլկլորի հետ համադրությունը:

Առհասարակ երիտասարդ հայ դաշնակահարի երաժշտական մտածողության ազգային բնույթը ընդգծված է: Լինելով ամենատարբեր երաժշտական ոճերի եւ ուղղությունների համադրման կողմնակից՝ Տիգրան Համասյանը հայկական ազգային երաժշտության մեղեդին վարպետորեն կարողանում է հնչեցնել տարբեր էթնո-մշակույթների խառնուրդում, ռոք, ջազ եւ անգամ դասական երաժշտության տարրերի զուգակցմամբ: Առաջին միջազգային փառատոնը, որին մասնակցեց նա, 2001 թվականին էր, Երեւանում, երբ նա դեռ 11 տարեկան էր: 2006-ին արդեն, Մ. Նահանգներում մասնակցելով միջազգային ջազ-փառատոնի, երիտասարդ դաշնակահարը գլխավոր մրցանակին արժանացավ: 2010 թվականի ապրիլին եւ այս աշնանը Տիգրան Համասյանը համերգային ծրագրերով հաճելի ակնկալներ պարգեւեց հայաստանցի հանդիսատեսին: Մեզ կրկին հաճելի էր հմայիչ հայ դաշնակահարին Մոնտե Կառլոյի փառատոնային բեմում հանդիպելը, այդ մասին Եվրոպական լրատվական ծրագրի միջոցով տեղեկանալը:

«Ես փորձում եմ վերստեղծել հայկական ժողովրդական երաժշտությանը հատուկ ներդաշնակությունը, գրում եմ այդ երանգներով հնչող մեղեդիներ, բայց դա զուտ իմ անհատական երաժշտությունն է: Դա նույնն է, ինչ օտար լեզու սովորած, բանաստեղծություն սկսես գրել այդ լեզվով: Ժողովրդական երաժշտությունն իր մեջ կրում է մեղեդու աներեւակայելի խորք ու հարստություն եւ իմպրովիզացիայի այնքան շատ հնարավորություններ տալիս: Այս երաժշտության վերադաշնակման բազմաթիվ միջոցներ կան, որպեսզի այն թեզ մոտեցնես:

Երբ ես 13 տարեկան էի, առաջին անգամ լսեցի այնպիսի երաժիշտների, ինչպես Կիթ Ջարրեթը, Յան Գարբարեկը եւ Գյուրջիեւը: Նրանք օգնեցին գտնելու իմ սեփական երաժշտական ոճը, որը մեկընդմիշտ մտավ հոգուս եւ արյանս մեջ: Ամեն անգամ, երբ ես նվագում եմ, երջանիկ եմ, դա իմ ուրախությունն է, իմ ցավը, հույսը եւ ես ուզում եմ վերապրել այդ զգացումը նորից ու նորից... Ահա թե ինչու ես այստեղ եմ», այսպես էր Տիգրան Համասյանի խոսքը:

Իսրայելցի երաժիշտ Ավիշայ Կոհենը համարվում է անհատականությամբ ընդգծված, անշփոթելի ձեռագրով արտիստ: Եվ նրա բեմական կեցվածքը, խոսքն էլ ճիշտ այդպիսին էր. «Արվեստագետի ներշնչանքը երկու աղբյուր կարող է ունենալ: Մենակություն: Հանկարծ զգում ես այդ հոսքը. չգիտեմ, գուցե դա կարելի է համարել էներգիայի հոսք, թռիչքի պահ՝ թեզ վեր բարձրացնող. ես չեմ կարողանում կանգ առնել:

Դա կարող է լինել նաեւ բեմում, ուրիշ երաժիշտների հետ, հանկարծ մեր միջեւ ինչ-որ բան է պատահում, ներշնչանքի ինչ-որ կայծ անցնում եւ բռնկում, համակում է բոլորիս միաժամանակ, եւ մենք միասին հաղորդակցվում եւ ապրում ենք աներեւակայելի ստեղծագործական վերելք:

Սկզբում սաստիկ նյարդայնանում էի, երբ երգում էի: Վախենում էի, որ ինձ մոտ ոչինչ չի ստացվի: Եվ առհասարակ դա շատ դժվար է նվագողի այսքան տարիների գործունեությունից հետո: Ի վերջո, հաղթահարեցի. իմ հայացքի առաջ ես աճում էի ե՛ւ որպես մարդ, ե՛ւ որպես երաժիշտ: Սովորել տիրապետել սեփական ձայնիդ, նույնն է, ինչ տիրապետել ինքդ թեզ: Դա շատ նուրբ արվեստ է:

Ըստ ru.euronews.net կայքի՝
Մ. Ք.

Տարին բեղուն էր Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի համար

Ինչպիսի՞ն էին 2011թ. Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի համար արդյունքները - երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ներկայացրեց տնօրեն Կամո Հովհաննիսյանը:

«2011 թվականը թատրոնի համար եղավ բուռն ստեղծագործական տարի, քանի որ բեմադրությունը մի քանի տարի տեւած «Սայաթ-Նովա» օպերան այս տարի հանձնեցինք հանդիսատեսի դատին: Օպերայի բեմադրման ժամանակ բարդություններ առաջացան: Մի քանի ռեժիսորներ փոխվեցին, ո՛չ թատրոնի, ո՛չ էլ կոլոկտիվի կամքով: Մեր շատ սիրելի Ռոբերտ Ստուրուան խոսք էր տվել, որ ինքը կբեմադրի «Սայաթ-Նովա» օպերան, սակայն մեկ տարի անց հրաժարվեց եւ բեմադրության հետ խնդիրներ առաջացան: (Նշենք, որ «Ազգ»-ը անդրադարձել է «Սայաթ-Նովա» օպերային-Մ.Հ.): Թատրոնի հաջողությունների շարքին է դասվում նաեւ Ս. Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետի (Այս բալետին եւս «Ազգ»-ը անդրադարձել է)»:

Ընդգծենք, որ 2011թ. կայացան 3 նոր պրեմիերաներ՝ Ա. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան, որը նվիրված էր կոմպոզիտորի 90-ամյակին, Ս. Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետ» եւ «Շոպենիանա» բալետը:

2011թ-ին, համաձայն Երեւանի քաղաքապետարանի հետ ունեցած պայմանագրի, թատրոնը ցուցադրել է մի քանի օպերային եւ բալետային ներկայացումներ դպրոցականների համար:

Թատրոնը սերտ համագործակցում է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի օպերային ստուդիայի եւ Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի հետ, որի արդյունքում բեմադրվել են մի քանի ներկայացումներ:

Ընթացիկ տարվա սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին թատրոնը պլանավորել է բարեգործական համերգների եւ ներկայացումների շարք, որի շրջանակում Ա. Բաբաջանյանի անվան փոքր համերգասրահում կայացավ փողային կամերային երաժշտության համերգ, որին մասնակցել էին թատրոնի նվագախմբի մենակատարները եւ Եվրոպայից հրավիրված երաժիշտներ: Ծրագրում հնչեցին Մոցարտի, Ֆրեսկոբալդիի, Զելենկայի եւ Գերբաուերի ստեղծագործությունները: Հոկտեմբերին ցուցադրվեց «Վերդիանա»-ն, իսկ դեկտեմբերին՝ համերգ թատրոնի մենեջիչների մասնակցությամբ: Այսօր՝ դեկտեմբերի 21-ին կկայանա բալետի երեկո:

Թվարկված միջոցառումների հասույթը ամբողջությամբ տրամադրվելու է փողային նոր նվագարանների ձեռքբերման ֆոնդին:

Հավելենք, որ շուտով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը կվերազինվի նոր տեխնիկայով, որի համար պետբյուջեից կտրամադրվի 8 միլիոն դոլար: Ինչպես նշեց Կամո Հովհաննիսյանը, «Թատրոնն այսօր օգտագործում է 60-ական թվականների տեխնիկա, որը վտանգավոր է»: Տեխնիկայի տեղադրման գործընթացը կտեւի 3 ամիս:

Ներկայումս թատրոնի ստեղծագործական խումբը աշխատում է Ջ. Բիզեի «Կարմեն» օպերայի բեմադրության վրա, որի համերգային կատարումը նախատեսվում է դեկտեմբերի 28-ին:

Ստեղծագործական կոլեկտիվի 2012թ. ծրագրերում են Ջ. Բիզեի «Կարմեն», Ի. Պուչչինիի «Բոհեմ» օպերաները, Պ. Չայկովսկու «Շչելկունչիկ» եւ Ա. Ասանի «Ժիզել» բալետները:

««Ժիզել» բալետը մենք ունենք, բայց քանի որ 30 տարի առաջ է բեմադրվել եւ դեկորներն ու հագուստները անմխիթար վիճակում են գտնվում, որով էլ անհարմար է այդ ներկայացումը խաղալ, որոշեցինք վերականգնել դրանք ու մի քանի փոփոխություններ կատարեցինք ներկայացման մեջ: Ռուդոլֆ Խառատյանն էլ խոսք է տվել, որ գալիք տարի այն կներկայացնի հանդիսատեսի դատին», ասաց Կամո Հովհաննիսյանը եւ անդրադառնալով Պ. Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետին նշեց. «Մենք որոշեցինք 2012թ. վերջապես ունենալ այդ բալետը, որպեսզի մյուս տարի դեկտեմբերին հանձնենք երեխաների դատին»:

Ամփոփելով նշենք, որ 2011թ. հունվար ամսից մինչեւ դեկտեմբերի վերջը ցուցադրվել է 56 ներկայացում, իսկ հանդիսատեսի թիվը կազմել է 23949 մարդ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԳԻՄՅԱՆ

Համերգ-պրեմիերա՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին

Երեկ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացավ կոմպոզիտոր **Վաչե Շարաֆյանի** «Ջնե ձոն» կանտատի պրեմիերան «Հովեր» պետական կամերային երգչախմբի կատարմամբ (խմբավար **Սոնա Հովհաննիսյան**): Կանտատը գրվել է այս տարի մշակույթի նախարարության պատվերով եւ նվիրված է հայկական գրատպության 500-ամյակին:

«Ջնե ձոն» կանտատը ժամանակակից ակադեմիական ստեղծագործություն է՝ շուրջ 45 րոպե տեւողությամբ եւ բաղկացած է 7 մասից: Համերգից առաջ լրագրողների հետ հանդիպեցին կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանը եւ «Հովեր» պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար ու խմբավար Սոնա Հովհաննիսյանը եւ տեղեկացրին, որ կանտատը գրված է Մեծարենցի, Կոմիտասի, Վանեցու, Մյոռի, Շիրազի եւ Դոգենի տեքստերի՝ «Ջմռան պարզ գիշեր», «Ջմեռնամուտ», «Ջմեռային լուսին», «Երնեկ այս ձմեռներին, որոնք գնում են՝ իրենց հետեւից բերելով գարուն» եւ այլ բանաստեղծությունների հիման վրա: Կանտատի պրեմիերան կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի 2011 թ. համաշխարհային պրեմիերաներից թվով 7-րդն է եւ ուշագրավ է, որ այն տեղի է ունենում Հայաստանում:

Ի դեպ «Հովեր» երգչախումբը համերգին ներկայացավ նոր հանդերձանքով, նոր զգեստներով, որի հեղինակն է դիզայներ Գայանե Սարիբեկյանը: Իսկ այդ տարազների ֆինանսավորումը հոգացել էր մշակույթի նախարարությունը, որպես նվեր երգչախմբին:

Համերգի մենակատարն էր երգիչ Գուրգեն Բավեյանը, իսկ երգեհոնի մոտ էր կոմպոզիտոր Հովհաննես Մանուկյանը: Սոնա Հովհաննիսյանն ասաց. «Ես կարծում եմ, որ կանտատը ապագա կունենա իր հրաշալի նյութով, եւ կլինեն բազմաթիվ կատարումներ: Մեր երգչախմբի հաջորդ տարվա համերգային ծրագրերում անպայման կընդգկենք»:

Վաչե Շարաֆյանը երաժշտական կրթությունը ստացել է կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի արվեստանոցում, այնուհետեւ ավարտել է ասպիրանտուրան, 4 տարի դասավանդել է Երուսաղեմի հայոց պատրիարքության հոգեւոր ճեմարանում եւ վերադարձել է Հայաստան եւ այժմ ապրում ու ստեղծագործում է Հայաստանում: Իսկ թե ինչպե՞ս մտահղացավ ձմեռվան նվիրված կանտատ գրել «**Ազգի**» հարցին ի պատասխան Շարաֆյանն ասաց. «Իհարկե, միանգամից զգացի, որ Հայաստանում դրա պահանջը կա, ունենալ համերգային մի ստեղծագործություն, որը հայալեզու լինի եւ նվիրված ձմեռային ամենանվիրական տոնին՝ Ամանորին: Համագործակցությունը «Հովեր» երգչախմբի հետ ինձ միշտ բավականություն է պատճառել եւ այս կանտատն էլ դարձավ նրանց համար նոր կատարում: Կանտատը սոսկ երգ չէ, այլ խոհափիլիսոփայական բնույթ ունի»:

Տեղեկացնենք, որ Վաչե Շարաֆյանի ստեղծագործությունները երկու օր առաջ նվագել են Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում, իսկ երկու օրից կինչի նաեւ Իսպանիայում, տեղեկացրեց կոմպոզիտորը: Ողջ տարվա ընթացքում պրեմիերաներ է ունեցել կոմպոզիտորը Ֆրանսիայում, ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Բելգիայում եւ Գերմանիայում:

Երաժշտությունը չունի սահմաններ եւ Վաչե Շարաֆյանի ստեղծագործություններն այսօր մեծ պահանջարկ ունեն երաժշտական աշխարհում:

Եկող տարին «Հովեր» երգչախմբի համար հոբելյանական է լրանում է հիմնադրման 20-ամյակը եւ այդ առիթով մարտի 1-7-ը կանցկացվեն հոբելյանական համերգաշարեր, իր հերթին տեղեկացրեց Սոնա Հովհաննիսյանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԳՆ-ում տեղի ունեցավ «Հայաստան. դարերից դեպի հավերժություն» գրքի շնորհանդեսը

Դեկտեմբերի 19-ին ԱԳՆ-ում տեղի ունեցավ «Հայաստան. դարերից դեպի հավերժություն» գրքի շնորհանդեսը: Գիրքը հրատարկվել էր Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ դեսպանության կողմից:

Գիրքը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա հոբելյանին: Այն պարունակում է ինչպես ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի մասին, այնպես էլ մանրամասն անդրադառնում է հայոց պետականության եւ ժողովրդի պատմությանը:

Ավելի քան 100 էջանոց պատկերազարդ գրքում ներկայացված են հայկական մշակույթն ու Հայ առաքելական Սուրբ եկեղեցին, նկարչությունն ու ճարտարապետությունը:

Գրքում անդրադարձ է կատարվում նաեւ անցյալի եւ ներկայի, Հայաստանի եւ Սփյուռքի աշխարհահռչակ հայերին:

Գրքի շնորհանդեսի տեսանյութը կարելի է բեռնել հետեւյալ ինտերնետային կայքից՝ http://www.mfa.am/video/video.html:

Ռոման Ամոյանը Հայաստանի լավագույն մարզիկ

Լավագույն թիմը շախմատի տղամարդկանց հավաքականն է

Ավանդույթի համաձայն, մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիան հարցման արդյունքներով որոշում է Հայաստանի լավագույն 10 մարզիկներին: Հարցմանը մասնակցել են 42 լրագրողներ: Հարցման արդյունքներով 2011-ի Հայաստանի լավագույն մարզիկ է ճանաչվել հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, 2008-ի Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր Ռոման Ամոյանը: Նա հարցման արդյունքներով վաստակել է 346 միավոր:

Ռոման Ամոյանի ընտրությունն օրինաչափ է: Այս տարի մեծահասակների աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկներից միայն երկուսին է հաջողվել չեմպիոն հռչակվել: Բացի Ռոման Ամոյանից, որն իրեն գերազանց դրսեւորեց Եվրոպայի առաջնությունում, մայրցամաքի չեմպիոնի տիտղոսը նվաճել է նաեւ սամբիստ Վաչիկ Վարդանյանը: Սակայն որքան էլ որ տարօրինակ է, Վարդանյանը 10 լավագույնների շարքում տեղ չի գրաղեցրել: Հավանաբար լրագրողներից շատերը հաշվի են առել այն փաստը, որ սամբոն օլիմպիական մարզաձեւ չէ: Սակայն, կարծում ենք, որ լավագույնի ընտրության հարցում օլիմպիական մարզաձեւ լինել-չլինելը չպետք է որեւէ դեր խաղա:

2-րդ տեղը 300 միավորով գրաղեցրել է հունահռոմեական ոճի մեկ այլ ըմբիշ՝ Արսեն Ջուլֆալակյանը: Վերջինս աշխարհի առաջնության բրոնզե մրցանակակիր է: Լավագույն եռյակը եզրափակում է շախմատիստ Լեւոն Արոնյանը, որը վաստակել է 296 միավոր: Լեւոնն ինչպես միշտ վստահ հանդես եկավ, Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում դարձավ աշխարհի չեմպիոն: Սակայն տարվա գլխավոր մրցաշարում՝ հավակնորդների մրցախաղում Արոնյանը չկարողացավ հաղթահարել առաջին փուլի արգելքն ու պարտվելով Ալեքսանդր Գրիշչուկին՝ դուրս մնաց շախմատային թագի համար մղվող պայքարից:

Այս տարի 10 լավագույն մարզիկների ցանկում միանգամից 2 ֆուտբոլիստ է ընդգրկված: Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ Հենրիխ Մխիթարյանը 237 միավորով հանգրվանել է 4-րդ հորիզոնականում, իսկ Յուրա Մովսիսյանը 140 միավորով 7-րդն է:

5-րդ տեղում մեր խոստումնալից ծանրորդ Աղասի Աղասյանն է, որի համար մրցաշրջան-2011-ը հաջող էր: Նա վաստակեց 151 միավոր: Աղասին համաշխարհային 26-րդ Ունիվերսիադայի եւ Եվրոպայի մինչեւ 23 տարեկանների չեմպիոնն է: Նրան 6 միավորով զիջեց 6-րդ տեղը զբաղեցրած հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը: Վերջինս 2 արծաթե մեդալ է նվաճել Եվրոպայի մեծահասակների եւ երիտասարդական առաջնություններում:

8-րդ հորիզոնականը 129 միավորով զբաղեցրել է մարմնամարզիկ Հարություն Մերդինյանը, որը Եվրոպայի առաջնությունում նժույգաթափերում արժանացել է բրոնզե մեդալի: Նրան հաջորդում է 124 միավոր վաստակած բռնցքամարտիկ Վլադիմիր Սարուխանյանը: Նա Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր է: Լավագույն տասնյակը եզրափակում է ազատ ոճի ըմբիշ, Եվրոպայի փոխչեմպիոն Մուսա Մուրթազալիեւը, որը վաստակել է 111 միավոր:

Մարզական լրագրողները հարցաթերթիկներում նշել են եւս 14 մարզիկների անուններ: Հավակնորդների թվում էին սամբիստներ Վաչիկ Վարդանյանը, Հակոբ Առաքելյանը, ծանրորդներ Արայիկ Միրզոյանը, Հռիփսիմե Խուրշուդյանը, ֆուտբոլիստներ Ռոման Բերեզովսկին, Կառլեն Մկրտչյանը, շախմատիստներ Էլինա Դանիելյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը, Սերգեյ Մովսիսյանը, նավամոդելավար Հրաչյա Շահազիզյանը, բռնցքամարտիկ Արմինե Սինաբյանը, հունահռոմեական ոճի ըմբիշ Յուրի Պատրիկեեւը, հրաձիգ Նորայր Բախսամյանը:

2011-ի լավագույն թիմ է ճանաչվել աշխարհի թիմային առաջնության հաղթող շախմատի տղամարդկանց Հայաստանի հավաքականը: 2-րդ տեղում ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն է, 3-րդը հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականն է:

Իտալիայում նոր սկանդալ է հասունանում

Իտալիայում ֆուտբոլային պայմանավորված հանդիպումների հետ կապված հերթական սկանդալն է հասունանում: Առայժմ հարցը վերաբերում է B սերիային, սակայն չի բացառվում, որ հետաքննությունը հասնի նաեւ A սերիայի թիմերին: Ոստիկանությունը ձերբակալել է 17 հոգու: Նախատեսվում է եւս 11-ին ձերբակալել: Ձերբակալվածների թվում է Իտալիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ եւ «Ատալանտայի» ավագ Քրիստիանո Դոնին, որը կասկածվում է պայմանավորված խաղերի մասնակցության մեջ: Դեռեւս օգոստոսին Դոնին 3,5 տարով որակազրկվել էր, իսկ «Ատալանտայից» 6 միավոր հանել էին: Դոնիից հետո ձերբակալվել էին Լուիջի Սարտորը, Ալեսանդրո Ջամպերինին, Կառլո Ջերվասոնին եւ Ֆիլիպո Կարոբիոն:

Ընդհանուր առմամբ կասկածի տակ է վերջին մի քանի տարում անցկացված ավելի քան 20 հանդիպում: Կասկածյալների մի խումբ սինգապուրյան բուքմեյքերական ընկերության միջոցով խաղադրույքներ էր կատարել այն հանդիպումների համար, որոնցում ներգրավված էին հենց այդ ֆուտբոլիստները: Բնականաբար, նման ձեւով դյուրին է հասնել ցանկալի արդյունքի ու հարստանալ խաղադրույքներ կատարելով:

Պայմանավորված խաղերի մեջ ներգրավված են եղել «Սիտադելլա», «Գրոսետո», «Բրեշիա», «Էմպոլին», «Ռեջինա» եւ մի շարք այլ ակումբներ: Հանցավոր խումբը ղեկավարում էր Էնգ Տան Սիսը:

Իտալիայի դատախազությանը հաջողվել էր հանցավոր խմբի վերաբերյալ տեղեկություններ հավաքել հեռախոսազրույցների գաղտնալսումների շնորհիվ: Հետաքրքրական է, որ նոյեմբերի 30-ին կայանալիք Իտալիայի գավաթի խաղարկության «Ջենոա»-«Գուբիո» հանդիպման համար դեռեւս սեպտեմբերին 200 հազար եվրոյի խաղադրույք էր կատարվել: Ընդհանրապես պայմանավորված խաղերի համար բավականին խոշոր խաղադրույքներ են կատարվել՝ 500 հազարից մինչեւ 1,5 մլն եվրո:

Կիմ Կլեյստերսը մրցակցությունից դուրս է

Բելգիացի թենիսիստուհի Կիմ Կլեյստերսը ճանաչվել է երկրի լավագույն մարզուհի: Նա այդ տիտղոսին արժանանում է 8-րդ անգամ, ընդ որում վերջին 3 տարիներին անընդմեջ: Բելգիայի լավագույն մարզիկի մրցանակը հանձնվել է հեծանվորդ Ֆիլիպ Ժիլբերնին:

ՇԱԽՄԱՏ

Հայ շախմատիստուհիների տհաճ անակնկալը

Շախմատի աշխարհի թիմային առաջնության 3-րդ տուրում Հայաստանի կանանց հավաքականը մրցեց մրցաշարի առաջատարներից մեկի՝ Չինաստանի ընտրանու հետ: Մասնագետները համառ պայքար էին ակնկալում: Սակայն հայ շախմատիստուհիներն իրենց երկրպագուներին տհաճ անակնկալ մատուցեցին՝ առաջատարին զիջելով անսպասելի 0-4 խոշոր հաշվով: Առաջնությունում իր 2-րդ հանդիպումն էլ պարտությամբ ավարտեց մեր հավաքականի առաջատար Էլինա Դանիելյանը, որը դատելով օրերս Չինաստանում ավարտված ինտելեկտուալ խաղերում ցույց տված ցածր արդյունքներից, ներկայումս լավ մարզավիճակում չէ: Ճիշտ է, Էլինայի մրցակցուհին աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանն էր: Լիլիթ Մկրտչյանը պարտվեց Ցզյու Վենցզյունին, Լիլիթ Գալոյանը զիջեց Չժաո Սյուեին, Մարիա Կուրսովան էլ հանձնվեց Տան Չժունի հետ մրցավեճում:

Ընդհանրապես 3-րդ տուրը հարուստ էր անակնկալներով: Առաջնության կազմակերպիչ թուրքերն անսպասելի հաղթանակ տոնեցին ուկրաինուհիների նկատմամբ՝ 2,5-1,5: Դա Թուրքիայի հավաքականի անդրանիկ հաղթանակն էր: Անսպասելի էր նաեւ մրցաշարի առաջատարներից մեկի՝ Վրաստանի հավաքականի պարտությունը վիետնամցի շախմատիստուհիներից՝ 1-3: Վրացիներն անդրանիկ պարտությունը կրեցին: Կարեւոր միավոր կորցրին նաեւ ռուսները՝ ոչ-ոքի խաղալով հույների հետ: Հնդիկները 4-0 հաշվով ջախջախեցին մրցաշարի բացահայտ հետնապահ Հարավաֆրիկյան Հանրապետության թիմին, որը նախորդ 2 տուրերում էլ նույնպիսի արդյունքով էր զիջել մրցակիցներին:

3 տուրից հետո թիմային 6 եւ բոլոր պարտիաներում վաստակած 10,5 միավորով միանձնյա առաջատարը Չինաստանի հավաքականն է: 5-ական միավորով առաջատարին հետապնդում են Հնդկաստանի (ընդհանուր միավորները՝ 9,5) եւ Ռուսաստանի (7,5) հավաքականները: ՀՀ հավաքականը թիմային 2 եւ բոլոր պարտիաներում վաստակած 5,5 միավորով 6-րդ տեղում է: 4-րդ տուրում մեր թիմը կմրցի հնդիկների հետ:

Չեմպիոնը գործնականում հայտնի է

Ավարտին է մոտենում շախմատի Բրազիլիայի առաջնությունը: Նախավերջին՝ 10-րդ տուրում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը սպիտակներով հաղթեց Զովանի Վեսկովիին ու 5 միավորով տեղափոխվեց 7-րդ հորիզոնական: Մխիթարյանը մրցանակակիր դառնալու հնարավորություն այլեւս չունի: Վերջին տուրում նա խաղալու է Յագո Սանտյագոյի հետ:

Բրազիլիայի չեմպիոնի տիտղոսը գործնականում նվաճել է Ռաֆայել Լեյտաոն, որը 8,5 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել աղյուսակը: 10-րդ տուրում նա հաղթեց Պաուլո Ռեյսին: 2-րդ տեղում ընթացող Ալեքսանդր Ֆիեռն ունի 7,5 միավոր: Նա եւս հաջող խաղաց՝ առավելության հասնելով Յագո Սանտյագոյի նկատմամբ: 6,5 միավորով լավագույն եռյակը եզրափակում է Էնրիկե Մեկինգը, որը հաղթեց Էվանդրո Բարբոսային:

Կրասովսկին հանդես կգա Իրանում

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության ավարտից հետո որոշ ֆուտբոլիստներ կարճ ժամանակով մեկնում են Իրան: Նրանցից մեկն «Ուլիսի» այս տարվա լավագույն ռմբարկու Գեորգի Կրասովսկին է, որը պայմանագիր է կնքել Իրանի առաջնությունում ներկայումս մրցաշարային ադյուսակը եզրափակող «Մեսի» հետ:

Կրասովսկին մտադիր է Իրանում հանդես գալ մինչեւ այդ երկրի առաջնության ավարտը՝ մայիս, որից հետո կվերադառնա Հայաստան եւ ելույթները կշարունակի «Ուլիսում»: Ավարտված առաջնությունում Կրասովսկին աչքի ընկավ դիպուկ հարվածներով՝ 8 անգամ գրավելով մրցակիցների դարպասները: Նա անցյալ տարվանից է հանդես գալիս «Ուլիսում»՝ տեղափոխվելով «Արարատից»: Կրասովսկին 12 գնդակով «Ուլիսում» հանդես եկած լեգեոնականներից ամենաարդյունավետն է:

Տիգանան հրավիրում է Դրոգբային

Նախկինում հանրահայտ ֆրանսիացի ֆուտբոլիստ Ժան Տիգանան գլխավորեց չինական «Շանհայ Շենհուա» ակումբը: 56-ամյա մասնագետը մարզչական աշխատանքի զգալի փորձ ունի: Նա ժամանակին մարզել է «Վեստ Հեմը», «Բորդոն» եւ «Բեշիքթաշը»:

Նշենք, որ վերջերս չինական այս թիմ է տեղափոխվել «Ջելսիի» հարձակվող Նիկոլյա Անելկան: Շուտով իր նախկին խաղընկերոջը կարող է միանալ նաեւ «Ջելսիի» մեկ այլ հարձակվող՝ Դիդյե Դրոգբան: Ժան Տիգանան պատրաստ է կոդիվուարցի ֆուտբոլիստի համար ակումբից գումար խնդրել: Ֆուտբոլիստին եռամյա պայմանագիր կառաջարկվի: Այդ ընթացքում նա 10-12 մլն դոլար կստանա: Դրոգբայով հետաքրքրվում էր նաեւ ֆրանսիական «Մարսելը», սակայն ֆուտբոլիստը նշել է, որ արդեն նոր թիմ է գտել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հեռանկար

ՆԵՐՔԻՆ ՕՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

«Բանակում արատավոր երեւույթները պետք է հասցվեն նվազագույնի»

Պաշտպանության նախարարությունը հրատարակել է «Զինվորական կարգապահության կտրուկ բարձրացմանը եւ արտակարգ դեպքերի ու պատահարների կանխարգելմանն ուղղված ցուցումներ» գրքույկը, որտեղ անդրադարձել են զինվորական կարգապահությանը, սոցիալ-իրավական աշխատանքների անհրաժեշտությանը, մարտական դիրքերում մարտական հերթապահության եւ պահակային ծառայության բարոյահոգեբանական ապահովմանը, զինվորների հետ տարվող հոգեբանական աշխատանքին:

Գրքում ներկայացված են նաեւ զինվորական ուսուցման եւ դաստիարակության հիմունքները, զինվորական մանկավարժության, ինքնադաստիարակության ու անհատական դաստիարակչական աշխատանքների կարեւորությունը::

Գրքում գրառում է թողել նաեւ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: «Ցանկացած անցումային փուլ հղի է թերացումներով եւ բացթողումներով, այնուամենայնիվ մենք թերացանք, տեղի ունեցան արտակարգ պատահարներ, հանցագործություններ, եւ այս ոլորտը զինված ուժերում մնում է ամենամտահոգիչը, ամենաբաց աշխատանք պահանջողը եւ թերեւս ամենախոցելին: Իրավիճակ, որ մտահոգում է ոչ միայն բանակի ղեկավարությանը, այլ նաեւ ժողովրդին: Արդարացված է հասարակության պահանջը, որ մեզ մոտ՝ բանակում, արատավոր երեւույթները պետք է հասցվեն նվազագույնի: Բանակում մարդկային կորուստները անընդունելի են», գրել է նախարարը:

Ըստ նրա՝ բանակում ոչ կանոնադրական վեճերի պատճառներից մեկն էլ այն է, որ բանակի ղեկավարության ցուցումները շատ դեպքերում մնում են թղթի վրա, չեն հասցվում անձնակազմին՝ վերաբերող մասով, ու նորից շարունակվում են կարգապահական խախտումները: «Նշված ցուցումները նորություն չեն, ոչ էլ կատարվող ամբողջ աշխատանքը, բայց հիմք են, որ յուրաքանչյուր հրամանատար ուղեցույց փաստաթղթի շրջանակներում եւ օգտագործելով իր հնարավորություններն ամբողջությամբ կանխարգելի բոլոր արատավոր պատահարները՝ մանավանդ մահվան ելքով: Բոլոր հրամանատարները պետք է հասկանան, որ սա մեր պատասխանատվության ու պատվի հարցն է»: Հ. Հ.

Աղբի տեսակավորումն ու վերամշակումը խոսքից գործ է դարձել

Առայժմ՝ Գյումրիում եւ Վանաձորում

Կենցաղային աղբի կառավարումը կարեւոր հարց է ժամանակակից աշխարհում, եւ հատկապես՝ բնապահպանական առումով: Եթե այս մասին խոսակցությունները մեզանում նոր չեն, ապա այդ մշակույթի արմատավորման ուղղությամբ առաջին քայլերը նոր-նոր են արվում: Բայց կարեւոր է, որ արվում են: 2009 թվականից գործող «Քլինլենդ» («Մաքուր երկիր») ընկերությունը Հայաստանում առաջին անգամ նախաձեռնել եւ արդեն ձեռնամուխ է եղել աղբի տեսակավորման ու օգտահանված նյութերի վերամշակմանը հանրապետության առայժմ երկու՝ Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում, որտեղ կառուցվել են տեսակավորման գործարաններ:

Ինչպես լրագրողներին ներկայացվեց Գյումրիում երեկ կազմակերպված մամուլի ասուլիսում, այժմ Հայաստանում գոյություն ունեցող աղբավայրերը չեն համապատասխանում բնապահպանական նորմերին: Կենցաղային աղբի մեջ գոյություն ունեցող նյութերը ոչ միայն ժամանակին չեն լուծվում, այլ նաեւ տարբեր բնակլիմայական ազդեցությունների ներքո արտադրում են թունավոր նյութեր, որոնք անցնում են թթնոլորտի եւ ստորգետնյա ջրերի մեջ՝ վտանգելով հարակից բնակավայրերի բնակիչների առողջությունը: «Քլինլենդ» ընկերության ձեռնարկը նպաստելու է բնակավայրերի աղբավայրեր ուղղվող աղբի ծավալների կտրուկ նվազմանն ու դրա որակական ցուցանիշների փոփոխմանը, համապատասխան բնապահպանական եւ առողջապահական խնդիրների լուծման բարելավմանը, կենցաղային աղբահանության որակի բարելավմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Վանաձորի տեսակավորման գործարանում աշխատանք է գտել 35, Գյումրիում՝ մոտ 45 մարդ: Բացի այդ, նշված երկու համայնքներից յուրաքանչյուրին ամսեկան վճարվելու է 3 մլն դրամ, որը Գյումրիում փոխադարձ համաձայնությամբ առաջին տարվա համար սահմանվել է 300 հազար դրամ: Ընկերության վերամշակման գործարանն էլ, որտեղ տեսակավորման գործարաններից օգտահանված նյութերը վերամշակվում եւ դառնում են տարբեր արտադրանքի երկրորդային հումք, կառուցվել եւ նոյեմբերից գործում է Երեւանում:

Քաղաքային բնակավայրերի աղբահանության արդյունավետ կազմակերպման, էկոհամակարգի եւ մարդկանց առողջության բարելավման նպատակով «Քլինլենդ» ընկերությանը Հրազդանի, Դիլիջանի եւ Սեւանի համայնքային ավագանիների որոշումներով եւս տրամադրվել է աղբի տեսակավորման բացառիկ իրավունք 25 տարի ժամկետով, դրանցում էլ այդ գործը կծավալվի, իսկ պլաններում նաեւ Հայաստանի հարավն է: Մնում է հաջողություն մաղթել մեզանում կենցաղային նոր մշակույթի սկիզբ դնող այս նախաձեռնությանը:

Գ. Մ.

sas.am ONLINE SUPERMARKET

SAS սուպերմարկետների ցանցը հայտարարում է իր նոր, մասնաբաժնային նախագծի մեկնարկի մասին

Դեկտեմբերի 20-ից պաշտոնապես գործում է Հայաստանում առաջին օնլայն սուպերմարկետը՝ SAS.am-ը:

Նախագիծն իրականացնելու SAS-ի որոշումը պայմանավորված է Հայաստանում ինտերնետ օգտագործողների թվաքանակի սրընթաց աճով եւ ոլորտի հետագա զարգացման փայլուն հեռանկարով: SAS.am-ը ոչ միայն արդի տեխնոլոգիաները բիզնեսում կիրառելու լավ օրինակ է եւ Հայաստանում էլեկտրոնային առեւտրի զարգացմանը նպաստող կարեւոր քայլ, այլեւ համացանցում հայկական բովանդակության բացառիկ նմուշ:

Դրա իրականացման վրա ամիսներ շարունակ աշխատել են բարձր որակավորում ունեցող տասնյակ աշխատակիցներ՝ թարգմանիչներ, ադրանագետներ, լուսանկարիչներ, դիզայներներ, SS եւ մարքեթինգի մասնագետներ, իրավական եւ ֆինանսական խորհրդատուներ: Ծրագրավորումն իրականացվել է էլեկտրոնային խանութների պատրաստման մեջ մասնագիտացած ընկերության հսկայական անձնակազմի կողմից: Դրվել եւ լուծվել են բազմաթիվ բարդ խնդիրներ, ներդրվել են մի շարք կարեւոր համակարգեր:

SAS.am-ում ներկայացված է SAS սուպերմարկետների ցանցի ողջ տեսականին՝ սննդամթերք եւ տնտեսական ապրանքներ: Եվրոպական էլեկտրոնային խանութների չափանիշներին համապատասխան հարմարավետ կայքում մեր այցելուները կարող են գտնել մոտ 30 հազար անուն ապրանք՝ իրենց անուններով, բարձր որակի լուսանկարներով, գներով եւ մանրամասն նկարագրությամբ՝ ներառյալ քաշը, ծավալը, բաղադրությունը, արտադրման երկիրը եւ արտադրող ընկերությունը, պահպանման եղանակը եւ այլն:

Մի քանի պարզ քայլով կատարվող գնումների դիմաց մեր հաճախորդները կարող են վճարել ինչպես էլեկտրոնային առեւտրի համար ավանդական օնլայն տարբերակով, այնպես էլ պատվերը ստանալիս՝ պլաստիկ քարտով կամ կանխիկ: Կորպորատիվ հաճախորդների համար գործում են հատուկ պայմաններ:

Առաքումն իրականացվում է ոչ միայն Երեւանի, այլեւ Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում՝ անկախ պատվիրված ապրանքի քանակից, գնից եւ ծավալից: Այսպիսով, շնորհիվ SAS.am-ի ընձեռած հնարավորությունների՝ SAS-ը դառնում է ամենալայն ծածկույթով սուպերմարկետների ցանցը Հայաստանում եւ հասանելի է լինում յուրաքանչյուր սպառողի՝ յուրաքանչյուր վայրում:

Հարցերի դեպքում կարող եք կապնվել հետեւյալ հեռախոսահամարով՝
Արմինե Փիլոսյան
+37493 04 25 78
+37410 55 05 05 (#203)

Սարերի գարունը մեկ գավաթի մեջ

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԵՎՈՐ Է

«Ծխնելույզագործական մասնագիտացված սերվիս» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը նպատակահարմարության տեսանկյունից եւս մեկ անգամ հիշեցնում է գազ սպառողներին, որ գազի սարքերի օգտագործման ժամանակ անհրաժեշտ է անշեղորեն պահպանել անվտանգության կանոնները՝

դրանք են՝

1. գազասարքերի օգտագործման ժամանակ ստուգել քարշի առկայություն ծխաօդատար ուղիներում : Քարշի բացակայության կամ թույլ քարշի դեպքում չօգտագործել գազի սարքավորումներ, դա չափազանց վտանգավոր է կյանքի եւ առողջության համար, քանի որ այդ ժամանակ առաջանում է ածխ գազ: Շինությունում ածխ գազի առկայության դեպքում մարդ թունավորվում է: Գազի հետագա օգտագործումը հնարավոր է միայն ծխնելույզները եւ օդափոխության ուղիները համապատասխան ծառայությունների կողմից ստուգվելուց եւ մաքրվելուց հետո:

2. Չօգտվել գազի ջեռուցման եւ ջրատաքացուցիչ սարքերից ուժեղ քամու ժամանակ:

3. Գազասարքի միացման թիթեղյա խողովակները պետք է մտցվեն մեկը մյուսի մեջ դրանց տրամագծի կեսից ոչ պակաս չափով ծխագազերի շարժման ուղղությամբ:

Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե՝

ա/ ստուգված չէ ծխաօդատար ուղիների սարքինությունը

բ/ ծխաօդատար ուղիներում բացակայում է քարշը կամ առկա է հետադարձ քարշ

գ/օդափոխության նպատակով նախատեսված ուղիները որպես ծխատար օգտագործելը

դ/ ինքնաշեն գազասարքի օգտագործում

Ներտնային գազի համակարգի հուսալի եւ անվտանգ շահագործելու համար անհրաժեշտ է պահպանել անվտանգության կանոնները:

Ծխաօդատար ուղիների ստուգման եւ մաքրման աշխատանքներ կատարելու համար կարող են զանգահարել 20 02 94 հեռախոսահամարով:

Հարգելի քաղաքացիներ, հոդվածը ընթերցելիս այն ընկալել նպատակահարմարության տեսանկյուն:

Ոչ պաշտոնական հրապարակում

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԱԶԳ-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարգելի ընթերցող: Սկսվել եւ շարունակվում է «Ազգ» օրաթերթի 2012 թ. բաժանորդագրությունը: Բաժանորդագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այն իրականացնող ներքոնշյալ մամուլի տարածման գործակալություններից.

- Պրես-Սենդ- (հեռ.՝ 54-41-99, www.armpress.am)
- Հայմամուլ- (հեռ.՝ 45-30-78, կայքէջ՝ www.haymamul.info.am)
- Հայփոստ- (հեռ.՝ 51-47-51, www.haypost.am)
- Պրես-Աստաշե- (հեռ.՝ 27-02-22, www.press-attache.am)
- Բլից Մեդիա- (հեռ.՝ 58-17-13, www.pressinfo.am)
- Թերթին կարող եք բաժանորդագրվել նաեւ Հանրապետության-47 հասցեում գտնվող խմբագրատանը (հեռ՝ 58-29-60, կայքէջ՝ www.azg.am):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն ընթերցողները, ովքեր կներկայացնեն թերթի բաժանորդագրության կտրոնը, իրավունք կունենան ամիսը մեկ անգամ անձնական բնույթի մեկ անվճար հայտարարություն տեղադրել թերթում, որը 1 շաբաթ կտեղակայվի նաեւ էլեկտրոնային կայքէջում:

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: